


Armenian Research & Academic Repository



**This work is licensed under a Creative Commons
Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

You are free to:

- Share** — copy and redistribute the material in any medium or format
- Adapt** — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.


715

716

717

82

9-76



0

ԳՐԱԴԱՎՈՐԻ ԳՐ. ԸՆԿՐԱցՈՒՅՑ

Կ Ե Մ Ա Ն Ս Բ Ո Բ Ե Ր Տ Ւ Գ Ո Ւ Ծ Ե

Միքայէլ Արքանդեանցի

ԱՀՏԱՏՈՒԹԵԱՄԲ

so, so

Imprimerie d'Ernest Barfknecht.

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

РОДИЛСЯ ВЪ ГОДЪ
151

САМОЕ ЧЕСТНОЕ ПОСЛАНИЕ

ДРУЖБЫ И БРАТСТВА

ПРИЧЕМЪ ВЪ МѢСЯЦЪ

27/03-62

8

Печатать позволяетъ С. Петербургъ, 4-го Апрѣля, 1858 года.
Цензоръ В. Бекетовъ.

Монастырь Голубинъ

8681

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԵՐՐԳ ՆԱԶԱՐԵԱՆ ԳԵՂԱՄԵԱՆՑԻ

ԱՆՄՈՒՄՆԱԼԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ



'Ullalif

Աիրական եղբայր .

Քո անմռռանալի յիշատակին նուիրելով այս փոքրիկ աշխատութիւնը , կատարումն միայն իմ պարտականութիւնը :

Քո զգացող սիրու և պայծառ հոգին , շատ անդամ զմայլել էր այս փոքրիկ գործի ընթերցանութեամբ . գու հոգեպէս ցաւակից ու վշտակից լինումէիր Շալէ կոմուհուն , գուցէ մարդարէաբար տեսանելով նորա վիճակի մէջ քո սգազգեաց , որը և այրի մօր ապագայ վիճակը , որ Նախախնամութիւնը պատրաստելու էր նորա համար , քո վերահաս վաղաթառամ վախճանով :

Ը ատ ժամանակ յառաջ , ես ցանկացել էի քո անունով զարդարել այս գործի ձակատը . բայց մեր ցանկութիւնքը մեր հետ միասին հող և մոխիր են Աստուծոյ անքննելի տնտեսութեան առաջն . շտապեց քո օրհասը և ահա մահարձանիդ տխուր և լոփի ուրուազիծը ցոլացաւ իմ աշխատութեան ձակատին : Օրհնումն մ՝ Նախախնամութեան կամքը և օրհնելով կատարումն մ գարձեալ իմ պարտականութիւնը , այսպէս վայելուչ համարելով լցուցանել ամենայն արդարութիւն :

Ո՞նդունիր ուրեմն իմ տխուր սրտի բղխուածքը , ընդունիր ասումն մ այս նուիրաբերութիւնը , որի վերայ դրոշմած է քո քաղցր անունը ոչ թանաքով , այլ , քո եղբօր աչքի արտասուրով :

Գիտեմ , քո այժմեան վիճակի մէջ , ծիծաղելի են երեւում , մեր մահկանացուներիս այսպիսի առ ժամանակեայ գործերը , պատճառ , յաւկտենականութիւնը զրաւելով քո կողմը , վեր ուղղել էիր հայեացքդ միմիայն գէպ ի մշտնջենաւորը , բայց ինչ առնես . ես կապված եմ գեռ ևս առ ժամանակեայ շրջապատի կապանքով իմ մարմնի բանդի մէջ և չեմ կարող այլապէս կատարել իմ գէպ ի քեզ պարտականութիւնը :

Հանդիստ քո հոգուն յաւիտենական , և խաղաղութիւն քո ոսկորներիդ :

Գ Տ Ս Ո Ւ Կ Դ Ի Ռ Ե Ա Վ Ե Ո Զ :

Կ Ե մ ա ն ս Բ օ բ ե ր տ ի գ ո ր ծ ը .

Ա .

Տ Ե Ս Ո Ւ Թ Ե Ւ :

Ո՞ի անդամ ամառնային մութն զիշերի մէջ, մի ձիաւոր լայն վերարկուով փաթաթված զնումքը Հեկրեօղեան խաղաղ հովտի միջով։ Նորա թուի հանդերձը, այլև նորա ջանքը, որ իւր ձիուն ընթացք տայ արօսների վերայով և այդպէս նորա քայլերի ձայնը լինի առաւել փոքր լսելի, տեղիք էին տալիս մասնելու, թէ այս ձիաւորը, չէր կամննում ճանաչվիլ. Նա հասաւ ամրոցի վանդակաշէն պարսպին, որի գուռը բաց էր, և շուտով անցայտացաւ ծառաստանի թանձր ստուերի մէջ։ Զիաւորը, որ այսպէս խաղաղ և նորհրդաւոր կերպով ներս մտաւ ամրոցի մէջ, էր Շալէ կոմնը, Լուգովիկոս տամներեքերրորդի պալատական, ամենագեղեցիկ ասպետը. իսկ կինը, որ ընդունեց նորան, էր աղնիւ և գեղեցիկ դքսուհին դը Հեկրեօղ։

¹⁾ Այս գործը առաջին անդամ տակառված է Հիւսիսափայլ օրուրի 1858 թւականի Փետրվարի ամսատերակում։

Երիտասարդ մարդը, վերայից հանելով իւր վերարկուն և լայնաշուրթ գլխարկը, երկեցաւ իւր բոլոր վսեմ՝ գեղեցկութեան մէջ։ Նա կը լինէր այն միջոցին քսան և չորս տարեկամ։ Նորա երկայն, պայծառ շագանակադոյն մազերը այն ժամանակի սովորութեան պէս երկու բաժանած, գագաթի վերայ, իմաս գանգուրներով թափվումէին նորա ուսերի վերայ։ Մեծ կապօյտ աչքերը կենդանացած էին մի առանձին քընդգութենով, իսկ սե, և մի փոքր վեր բարձրացրած ընչացքը տալիս էին նորա համարեա թէ միշտ մտախոչ երեսին մի աղնիւ հպարտութեան կերպարանք։ առ հասարակ նորա բոլոր գծագրութիւնքը զուգապատշաճութեան օրինակ էին։ իսկ ձեռքերը համարվումէին առաւել գեղեցիկները պալատի մէջ։

Այս հագած էր սե թաւիշեայ զգեստ ատլասեան վերջաւորներով։ սպիտակ բատիստեայ շրջադարձ օձիքի տակից երկումէին սոկեայ շղթաներ, թանգագին քարերի բաղմութիւն շարած էին այն հանգոյցների մէջ, որ զարդարումէին նորա կուրծքը, իսկ կօշիկները յօրինված էին լայն ասղնագործով, որ հասանումէին մինչև կրունկի խթանները։

Այս գիշերային առաջին ժամերը թուան գնացին կոմինի համար շատ արագ և աննկատելի կերպով։ Երկար ժամանակ նստած էր նա այն կին մարդու ոտքումը, որին տալիս էր անունս Վալենտինս, մոռանալով բոլոր աշխարհը և վերացած լինելով իւր երջանկութեամբ։ Այս երջանկութիւնը ոչինչ ամփերով մնայլված չէր։ և եթէ Վալենտինայի երեսը, որ սիրելի էր կոմնին, ժամանակ առ ժամանակ գունաթափումէր յանկարծ, եթէ նա թաքցրեց ատլասեան բարձի տակ մի նամակ, երբ որ նորա սիրականը ամենայն ջերմութեամբ համբուրումէր նորա ձեռքերը, եթէ նորա չորս կողմէն ցրիւ ընկած թղթեր ու զիշները ցուցանումէին, թէ նա տեսութենից յառաջ պարապած էր մի այլ բանով, քան թէ սպասելով միայն իւր սիրականին, այնու ամենայնիւ այս բոլորը, հասկանալի չերեւցաւ սիրով վառված երիտասարդին ենա մնաց ամենելին հանգիստ։

Առօքա միայն, որ խաղաղ են հոգով, կարող են ուշադիր լինել ամենայն բանի. բայց նորքա, որոնց սրտին տիրած էին ախտերը, տեսանումնեն և մտածումնեն միայն ախտի առարկայի վերայ։ բոլոր միւս բաները որպէս թէ չը կայն նոցա համար։

Դքսուհին զք ջելքեօղ հանգստացած էր երկայն աթոռների վերայ, սպիտակ բեշեղեայ զգեստը և մարդարտեայ մանեակը էին նորա բոլոր զարդարանքը, և այս պարզութիւնը համեմատ էր կէս գիշերի խորհրդաւոր ժամերի խաղաղ երջանկութեամնը։

Ո՞ի այսպիսի բոպէում, երբ այր մարդը բոլորովին անձնատուր է

լինում այն կին մարդուն, որին սիրումէր, և երբ կին մարդը այնու ամենայնիւ աշխատումէ փորձել սիրահարի սիրու, որ ընծայումէր իւր անձը նորան: Ալենտինան դուցէ թէ խորհրդով, տուեց իւր խօսակցութեանը մի այնպիսի ձեւ, որ ցցց էր տալիս թէ չէ հաւատում իւր սիրահարին և որպէս թէ կասկած ունի կոմս Շաքէլ սիրու մասին:

»Ո՞վ դրսուհի», բացազանչեց կոմնը, հագրտութեամբ վեր կանգնելով տեղից, զգուշացէր: Կասկած տանել այնպիսի սիրու վերայ, ինչպէս իմն է, համարեա թէ այնպիսի սեղանակապտութիւն է, որպէս թէ մի մարդ կասկած տանէր բնութեան խկութենի վերայ»:

Ալենտինայի երեսը մի քանի բովլէ վառվեցաւ կարմրութեամբ և թեթև երկիւղով յառաջ տարաւ նա իւր խօսքը այսպէս: —ուրիմ դուք սիրու ի՞առնուիք, իմ համար յանձն առնուլ զրկանքներ:

»Լմենայն զրկանք յանձն ի՞առնում»:

—Եւ ոչ միայն իմ, այլև նոցա համար, որոնց սիրումեմ՝ ես:

»Լոյն, երդումեմ իմ պարծանքովս»:

—Եւ մի թէ այնպիսի գիպուածում ես, եթէ ստիպված էիք վրբէժինդիր լինել իմ թշնամուց:

»Լոյնտարակոյս»:

—Եւ կը հրաժարվէիք այն հարստութենից, որ կարող էր տալ ձեզ պալատը:

»Ես ունիմ երեսուն հազար էֆիմակ տարեկան եկամուտ, պատասխանեց կոմնը, տղայական հպարտութեամբ»: այսպիսի հարստութեան ունին պատճառ նախանձելու արքայազները անդամ:

—Եւ պաշտնի պատուի օգուտներից, որ պիտոյ է ստանայիք:

»Ես ըստ խնդրեցի Անժուեան նահանգապետութիւնը և զլսաւոր պալատապետութեան պաշտօնը, այլ ինձանից խնդրած էին, որ յանձն առնում այդ երկու պաշտօնքը»:

—Եւ սուրբ Հոգու կարգի նշանից, որ դուք յզս ունիք ստանալ և որի մասին արհամարհանքով խօսելու չէք: պատճառ, սաստիկ ցանկանումէիք հասանել այդ պատուին:

»Այս հրաժարվէիք արդեօք նորանից ձեր համար . . . ով Ալենտինա, ձեր մի համբայրը թանգ է ինձ քան թէ Գրանսիայի բոլոր պատուանշանքը»:

Կինդանի և քնքուշ երախտագիտական զգացողութիւն նկարագրվեցաւ մի բովլէ գքսուհու աչքերումը: նա սկսեց յառաջ տանել իւր հարց ու փորձը, բայց ոչ ես այնպիսի հպատատ ձայնով, ինչպէս յառաջ:

— Բայց այն հարստութիւնը և պատիւները, որ ձեր միջնորդութեամբ թափելու էր թագաւորի ձեռքը ձեր մօր վերայ. մի՛թէ դուք կը հրաժարվէիք դոցանից իմ համար :

»Ո՛չ դքսուհին. մէջ բերելով իմ մայրը, դուք կարծումէք, որ կը հարկադրէք ինձ յողդողդիլ. Զեմ թաքուցանում, որ ես գուցէ թէ չը կարողանայի տանել մի այդպիսի փորձութեան, բայց քաւ լիցի ձեր կողմից, իմ անձը ենթարկել դորան. Ես ոչինչ չեմ կարող առնել իմ մօր համար. հարստութիւնքը ոչինչ բան կարող չէին յաւելացնել նորա երջանկութեան վերայ. պատճառ, մայրս իմ երջանկութիւնը վերադասումէ ամենայն բարութենից, որ բաղդը կամ դիպուածը սովորէ ուղարկել մարդուն. իսկ պատիւները ամենեին անպիտան են նորան. թէպէտ և թագաւորը թափէր նորա վերայ իսր թագի լոլոր մարդարիտները, դոքա ևս կարող չէին ծածկել նորա սուրբ բարեգործութիւնքը, որով փայլումէ այս անհամեմատ կնոջ կեանքը

— Այս, տեսանումեմ, որ պիտոյ է ինձ իմ հարց ու փորձս բաց թողուկ և հաւատալ քո սիրուն. Այս ասելով պարզեց Վալենտինան դէպէտ ի կոմսը իւր գեղեցիկ ձեռքը իրրև նշան խաղաղութեան :

»Փիխանակ կուրօրէն ինձ հաւատալու կարող էք գործով փորձել :

— Այդ գուցէ կը պատահի, բայց ոչ այժմ. յետոյ

»Ոչ յետոյ, այլ այժմ. ասաց կոմսը, ոտքը զարկելով գետնին անհամերութենից. »պահանջեցէք ինձանից իմ կեանքը այսօր իսկ

— Այսօր բացադանչեց դքսուհին հառաչելով, — վատարաղդ Շալէ. մի՛թէ կամէիք դուք հանդէպ գնալ այնպիսի ցաւերի, որ երկիւղալի էին պալատական հակառակութենների մէջ ծերացած մարդերին ես, և հարկադրումէին դողալ և սարսափիլ այն մատաղահաս կին մարդերին, որ անդիտութեամբ, անհոգութեամբ և ուրախասիրութեամբ չենի էին ամենայն ստոյգ անհանգստութենից և վտանգներից

Ո՛չ, իմ բարեկամ, դու ստէպ հարցանումէիր ինձանից իմ արտասուքի և հառաջանքների պատճառը կամի՞ս իմանալ այդ պատճառը :

»Այսօր « բացադանչեց կոմսը, լնինելով դարձեալ դքսուհու ուոտքը, ոչ աւատան ինձ քո արտասուքը, քո վշտերը, քո ամենափոքր տրտմութիւնքը, թողի իմանամը ես բոլոր քո միտքը, բոլոր ցանկութիւնքը. այնուհետև միայն կը լինիս դու կատարելապէս իմը ասա ինձ այդ բոլորը, բաց արա ինձ քո հոգին, և առ իմ կեանքը, իմ գալոց օրերը, իմ ամենայն բանը

— Դմացիր ուրեմն մեծահոգի և հաւատարիմ բարեկամ, որ կայ մի մարդ, որի վատթարութիւնը կամի իսլել ինձանից այն բանը որ աշխարհի վերայ եղած բոլոր բաներից առաւել թանգարին էր ինձ, որ թու-

Նաւորումէ թագուհու, իմ պաշտելի խնամածուի կեանքը և թափումէ իւր թղյնը միւս շատերի վերայ: Այդ մարդը ոչ կը զրկվի իւր իշխանութենից, ոչ կը հեռացվի պալատից... հարկաւոր է, որ նա մեռանի, ապա թէ ոչ. ամենայն ինչ խորտակվելու է նորա ամենակործան ուժի հարուածի տակ:

» Ե՞՛ս, Վալենտինա, Բ'նչ պատճառով ծածկումէիր այդ բանը ինձանից մինչեւ այսօր. այս սուրբ վաղուց ահա աղատած կը լիներ քեզ նորանից:

— Ե՞նինը. դու չը գիտես, թէ ով է այդ մարդը:

» Քառող լինի նա դուքս, պէր, թող արքայազն լինի. իմ Բ'նչ գործն է:

— Եւա մեծ է քան այդ յիշված մարդիկը:

» Քադաւորն է:

« Վալեն գունաթափ եղաւ և յետ քարշվեցաւ:

— Ո՞նք քան թէ թագաւորը:

» Կարդինալը . ո՞չ, ևս հանգստանումեմ.... որպիսի ուրախութեամիր պիտոյ է պատերազմ բանամ ևս այդ կարմիր մերարկուի հետ, որ վաղուց ահա ծակումէ իմ աչքը:

— Դու ատումես նորան բնական ազգեցութենով, չիմանալով թէ ի՞նչ ատելի բան կար նորա մէջ: Նա սկսեց իւր թագաւորութիւնը, Մարիա Մեդիչիսը հալածելով. Լուդովիկոսից շնչեց նա մի ապերախտ որդի, և հարկագրեց նորան հեռացնել թագուհի մայրը նորա ծանր և գժուար ասպարիզի վերջումը այնպէս, ինչպէս հեռացնումեն մի ծառայ, երբ սա աւարտել էր իւր գործը. Նա մատնեց իւր որդեզիրը կատարեալ անգործութեան. գայիսնի փոխանակ տուեց նորա ձեռքը բաղէ և նուագարան: Աչք պահելով թագաւորի բոլոր ընթացքի վերայ, ինկվիզիտորի սեպհական խորամանկ խստութենով, նա չէ դադարում նոյնպէս նեղել ու Ճնշել և մատաղահաս թագուհին: Զէ կարելի մոքով նկարագրել այն բոլոր տառապանքը, որ կրումէ նորա ձեռքից խեղճ, Աւստրիական Աննան: Նա անբաղդ է իրբեւ թագուհի, որից խլումէր կարդինալը ամենայն իշխանութիւն և իրաւունք. անբաղդ է իրեւ ամուսին, որ զրկվումէր կարդինալի ձեռքով ընտանեկան ուրախութենից: Մինչեւ անդամ եկեղեցու մէջ, ուր նորա հպատակների ամենավերջինը, գտանումէ մսիթարութիւն, և ուր ամենայն ինչ հոգեորված է խաղաղութենով և սիրով, մինչեւ անդամ այս տեղ, սպասումէ թագուհուն ամենախիստ ատելութիւն, մերժված սիրու ատելութիւն....

Աստիկ ամբոխված զբսուհին դադարեց մի րոպէ. յետոյ ժողովիւլով միտքը շարունակեց:

» Ո՞նիստրոը, որ մեռանումէ պատու ասիրութեան ծարաւով և դադ-

Նի նախանձու թունով, հալածումէ անիրաւապէս մանաւանդ թէ այն երեւելի օտարերկրացին, որ բնակվումէ մեր պալատումը, մօտ գրաւելով մեր բոլոր մատաղահաս աղնուականքը, և որին, ինչպէս երևումէ, յաջողել էր, իւր վերայ դարձուցանել թագուհու ու շաղբութիւնը, Կարդինալը ցանկանումէ ինչպէս և իցէ հեռացնել բուքենչեմը. նա հաւատացնումէ թագաւորին, թէ Անդինական դեսպանի և Աւատրիական Աննայի մէջ եղած սէրը ոչինչ կարծիքի տակ չէ. նա թափումէ Լուդովիկոսի սրտի մէջ այն նախանձը, որ այրումէր իւր սեփական սիրողը, և խօսումն, թէ կարողացել է արդէն յօժարեցնել թագաւորը, որ սա պահանջէր Անդինայից վտօնել իւր գեսպանը: Ես նամակ ստացայ տիկին դը Լիւլինիլից, ուր խօսվումէ այս մասին, իբրև այնպէս բանի վերայ, որ երբէք տարակուսի տակ ընկնելու չէր:

Խորին լուսութենով լսումէր դքսուհու խօսքերը Շալէն. այս բոլոր շատ փոքր զրաւումէր նորան՝ և չէր պատճառում նորա հոգու մէջ այն ատելութիւնը, որ ցանկանումէր դքսուհին պատճառել:

»Ձեզ օտար են այս բոլոր հակառակութիւնները, իմ բարեկամ» շարունակեց Վալետինան, »դուք գետ նոր վերադարձել էք Լոնդոնից, ուր մտածումէն այն մասին, որ իւլին ձուգենօթներից մի քանի ամբոցներ: Գուք չը դիտէք այն անարգանքը, որ հասուցանումէ մեզ մեր անհաշտ թշնամին: Եթէ այն երեւելի մարդերից յետոյ, որոնց մասին խօսեցի, համարձակվէի ես անուանել և ինձ, այն ժամանակ դուք կ'իմանայիք որ ինձ ևս բաժին հասած են ամենասաստիկ անարգութիւններ և վշտեր: Ես կը պատմեմ ձեռլ մինը, որով կարող էիք դատել միւս մնացածների վերայ: Մի քանի օր սորանից յառաջ կարդինալը նայելով իմ վերայ իւր խորամանդ աչքերով, ասաց. դ'Անկր մարշալի տիկինը չէ մեռած. կայ մի կին, որ սեփականումէ ինքեան գանձարանի հարըստութիւնը, և դէպէ ի չարը գործ դնելով թագուհու հաւատարմութիւնը, վաճառումէ տեղեր ու պաշտօններ:

— Վ, յդպէ՞ս է խօսել ձեր մասին — բացագանցեց Շալէն քարշելով սուրը, — նա ասել է այդ բանը և դուք մինչև այժմ վրէժինդիր չէք եղած նորանից:

»Պատճառ, ևս չը կամէի, որ ուրիշները ինդրէին իմ վրէժը. ես կամենումէի որ այդ բանը ձեր ձեռքով լինի: Ես չեմ պահանջում ձեղանից յայտնի պատերազմ կարդինալի հետ. այդ անկարելի է, և վշտանդաւոր ձեր համար: Նորա ընդդէմ դինուորված են երիտասարդ աղնուականք, որ զիտէին իւրեանց կոչման յարգը, իւրեանց երաւութեան աղատութիւնը, որ կամենումէր Ֆիշելօն Խլել նոցանից: Այդ աղնուականքը սորա են, Պատօն, թագաւորի եղբայրը, Մօնիկութիւնը:

րանսին, երկոքին Վանդումքը, Մօժիրօնը, գ'Անդրագը, Ժուանվելը. մի խօսքով, ամենեքեան նորա, որոնց երակների մէջ խաղումէ աղնուական արիւն: Միացէք այս բորբոքված, բայց անսիրտ երիտասարդների հետ, վառեցէք նոցա հոգին ձեր հոգու կրակով, հարկադրեցէք նորանց ներդործել, և շտապեցէք կատարել այն նախապատրաստած դաւաճանութիւնը, որի մասին ամենայն ուշացած բովէ կորստական էր:

Շալէ կոմը կանգնած էր գքսուհու առաջև և ձեռքը դնելով կուրծքի վերայ, ասաց յաղթական կերպով:

— Խամ պարծանքովս խոստանումեմ ձեղ գործ դնել ամենայն կարելի հնար, ձեր վրէժը հանելու կարգինալից :

» Ո՞չ մոռանաք նոյնպէս, որ կը հանդիպի ձեղ մի փոքր ժամանակ չեռանալ թաղաւորից :

— Գիտեմ:

» Լուդովիկոսը սիրումէ և պաշտպանումէ ձեղ:

— Մի և նոյն է իմ համար, ես խոստացել եմ ձեղ:

» Կա շնորհ է ձեղ զլսաւոր պալատապետ:

— Երկինքը շնորհ է ինձ իշխան և ազնուական:

Ալենտինան ցած թողեց աչքերը, որպէս թէ ամաչելով, որ կարողացաւ կասկած տանել. բայց մի բովէ լուռ կենալով, ասաց յետոյ քնքշութեամբ: «Բարեկամ, կանթեղի լոյսը սկսումէ շիկանալ, շուտով կը լուսանայ օրը . . . շտապիր Աստուծոյ սիրու համար, շտապիր հեռանալ, ես չը կամիմ, որ տեսանեին քեզ հովտի մէջ այսպէս շուտով:

Շալէն հնաղանդվեցաւ. նորա համար անցաւ այն գիշերներից մինը, որոնց միջոցին սէրը, այն ժամանակների զլսաւոր բան ու գործը, խառնված տէրութենական գործերի հետ միասին շատ անգամ երևելի գիտուածների պատճառ էր լինում:

Շալէն հանդարտութեամբ իջաւ փոքր և գաղտնի սանդուղքների վերայով, և երբ մօտեցաւ զլսաւոր մուտքին, ուր արեգակի անդրանիկ ձառապայթները փոքր առ փոքր սկսումէին հալածել գիշերի խաւարը, տեսաւ նա մի քանի քայլ իւրեանից յառաջ մի բարձրահասակ կերպարանք . . . նա յարձակվումէր ահա նորա վերայ, որ բանէ նորան, բայց այն բովէին երբ նորա ձեռքը մօտեցաւ շօշափելու այս ստուերը, սա ծածկվեցաւ պարտէղի թանձր ձանապարհի մէջ և շուտով անյայտացաւ բոլորովին:

Բ.

Աստակած այս գիշերի քաղցր տպաւորութեններից, որ վայելել էր, տուն վերադարձած Շալէ կոմը, պատրաստվումեր գնալ անկողին, որ մի ժամ հանդիսաւ առնու: Յանկարծ նորա հայեացքը զարմանալով ընկաւ մի մեծ ծրարի վերայ, որ կնքած էր թագաւորական կնքով և գըրած հնոցի վերայ: «Նա մօտեցաւ, բացեց կնիքը և տեսաւ Սուրբ Հոգւոյն ասպետական նշանը իւր հրովարտակով, որի հետ դրած էր և թագաւորի ձեռքով գրած մի տոմսակ: Այսպիսի անսովոր շնորհ ցոյց տուած մի այնպիսի երիտասարդ մարդու, զարմացք բերեց Շալէ կոմի վերայ:

»Ովլ իմ պաշտելի թագաւոր, ձայն արձակեց նա արտասուքը աչքերում, » դու միտք ես բերել ինձ, դու պատրաստել ես ինձ անակընկալ ուրախութիւն նոյն իսկ ժամանակին, երբ ես խոստանումեի կորուսանել քո ընտրած մինիստրը.... Աստուած իմ, Աստուած իմ, և ես երդուեցի կատարել....

Խողմանքի խայթը կտոր կտոր էր առնում կոմի սիրտը՝ այս ձայնը ասումեր, թէ նա շատ վատ է արել, բայց նորա հոգուն տիրել էր մի այնպիսի բորբոքված ախտ, նա այնպէս քնքուշ սիրով սիրումեր դքսուհին, որ ոչինչ զրկանք չէր կարող արգելը լինել նորան, և նա կամենալով ապացուցանել իւր երախտագիտութիւնը, այն երջանկութեան փոխարէն, որ նորան բաշխել էր դքսուհին, վճուց հաստատ մնալ իւր դիտաւորութեան վերայ և կատարել իւր երդումը առանց զանցառութեան:

Վի բոպէ հեռանանք այս երիտասարդ կոմից, որ անձնատուր էր այն գժուար և տիսուր մտածութեններին, որ տիրել էին նորան, և մի փարք յետ դանանք դէպի ինորա երեխայութիւնը և դէպի ի այն ժամանակը, երբ նա առաջին անգամ երևեցաւ արքայական պալատումը:

Երուա հայրը, շառաւիղումեր թալեյրանեան իշխանների ցեղեց, որ երբեմն տիրումին գերիգորին, որ կարողս չորրորդը միացուց ֆրանսիական թագի հետ, Հենրիկոս երրորդի ձեռքով ստացել էր իւր նախկին իրաւունքները, այսինքն յետ դարձուցած էր նորան նորա հարց հին ամրոցը, սակայն առանց այն իշխանութեններին, որ ունէին նորա նախահարքը դաւանաների վերայ:

Հենրիկոս Շալէ մանուկ կոմը շատ վաղ զսկվելով հօրից, մնացել էր իւր մօք հոգաբարձութեան տակ. թէպէտ և նորա մայրը շատ բարձր խելքով կին էր համարվում, այսու ամենայնիւ նորա տուած կրթութիւնը չը կարողացաւ մատաղահաս կոմի մէջ յառաջացնել մի պատ-

շաճապէս հաստատ բնաւորութիւն, այլ ձգեց նորա սրտի մէջ քնքուշ զգացողութեան և վերին աստիճանի բարեպաշտութեան սերմեր:

Երբ Շալէ կոմը քսաներկու տարեկան դարձաւ, նորա մայրը տեղէր տալով այն հին բարեկամների յորդորանքին, որ ունէր թագաւորական դռւոր արձակել իւր որդին, որից մինչեւ այն միջոցը երեք չէր բաժանված: Հոկտեմբեր ամիսն էր. կոմը պատրաստվումէր առաջին անդամ հեռանալ իւր հայրենական ամրոցից. առաւօտեան չորս ժամի մօտ Շալէ կոմուհին, ներս մտաւ իւր որդու սենեակը, որ հրաժարական ողջոյն տայ նորան և ձգէ նորա վեղը այն պատկերը, որ մինչեւ այն բոպէն կրումէր ինքը իւր վերայ:

Պարկեշտ պարզութիւնը այն թուխ հանգերձների, որ Շալէ կոմսուհին շուտով հագել էր, և նոցա անդարդութիւնը տալիս էր նորան մի սգաւոր կերպարանք. պատճառ, սովոր էին տեսանել կոմուհի Շալէն միշտ գեղեցիկ հագված, ինչպէս պատշաճ էր նորա կոչմանը: Սպիտակ մեղքամուց ճրագը, որ վառվումէր սենեկի մէջ, լուսաւորումէր նորան թոյլ և մեռեալ լուսով: Շալէ կոմուհին նստած էր իւր որդու մօտ, որ քանի ժամ սորանից յառաջ ելանելով անկողնից, որ նայէ և տեսանէ իւր գնալու համար եղած պատրաստութիւնքը, ընկած էր ծնկի վերայ և աղաչումէր Աստուածը, որ տայ իւրեան մի անվտանգ ճանապարհորդութիւն: Երկար ժամանակ լուութեամբ նայումէր նորա վերայ վշտացած մայրը. Շալէ կոմը այնպէս գեղեցիկ էր այս խոնարհ և հեղ գրութեան մէջ, նորա մանուկ ճակատը փայլումէր այնպիսի վերին աղնուութենով, որ մայրը չը կարողացաւ իւր աչքերը դարձուցանել նորանից: Վառվող ճրագի լոյսը կողմնակի ընկնելով կոմսի վերայ, անչափ նման բացարձակվումէր նորա կերպարանքի ստուերը սպիտակ պատի վերայ, որ այդ տեղումը հարթ ու հաւասար էր և ծաղիկներով զարդարած:

Կոմուհին առաւ կապարագրիչը և շատ ճշգապէս նկարագրեց պատի վերայ այն կերպարանքը, որ այս կերպով մնաց պատի վերայ ծաղիկների մէջ:

»Ես պահպանումեմ այս տեղ գո՞նէ քո մի բանը, իմ որդիս ասաց կոմուհին. »Քո բացակայութեան ժամանակ, այս սենեակը պիտոյ է զարդարված լինի միշտ այնպէս, ինչպէս այսօր, և շրջապատած այն ծաղիկներով, որ գու միջումէիր. այս տեղ կը գամ ես ամենայն օր միթարմելու քո յիշատակովը, և ինձ պիտոյ է թուի, որպէս թէ քո չետ էի միասին:

— Ուայրիկ, կարո՞ղ եմ ես յուսալ, որ իմ աղաչանքը երբեմն կը

Համոզվեն ձեղ՝ որ դուք կը յօժարէիք վերջապէս դալ դէպ ի Դուռը և լնակել այն տեղ իմ հետ միասին։

»Ծանի դու բաղդաւոր կը լինիս, ես այդ բանը չեմ առնելու, բայց եթէ երբ և իցե ամենափոքր անբաղդութիւն քեզ հասանելու լինէր, այն ժամանակ դու երկար կրելու չէիր նորան միայնակ։

— Այդ Բնէ բան է . . . հարց արեց կոմնը։

» Այդ, բուի ձայն է», պատասխանեց մայրը գուշաթափած, «Նա, օրը լուսացած, վերադառնումէ իւր բայնը»։

— Ի՞այց նորա ձայնը լսվեցաւ այն ժամանակ, երբ դուք խօսումէիք անբաղդութեան վերայ . . .

Ամենայն բան պատրաստ էր ճանապարհորդութեան համար. ամբոցի ցածումը լսվեցան ծառաների ձայներ և ձիերի փրփնջոց։

Ըալէ կոմնուհին և նորա որդին բաց արեցին պատուհանը, որ ստուգեն, թէ բաւական լուսացած էր արդէն օրը, կամ կարելի էր ճանապարհ դուրս գնալ։ Այս պատուհանը նայումէր դէպ ի այն ճանապարհը, որի վերայով պիտոյ է Փարփակ գնար երիտասարդ ճանապարհորդը, և այն բովակին երբ նորա մօտեցան պատուհանին, երկնքի հաստատութենից բաժանվեցաւ մի աստղ և անցանելով մնյդ կապոյտ կամարի վերայով, ընկաւ նոյն իսկ ճանապարհի վերայ։

Այս երկրորդ գուշակութեան վերայ, որ այն նանբահաւատ ժամանակներում համարվում էր մի ճակատագրական բան, Ըալէ կոմնուհին չը կարողացաւ զսպել իւր արտասուբը, և սիրտը վշտերով ու ցաւերով լցոված, բարեաւ մնա արեց իւր որդու հետ։

Ըալէ կոմնը սկզբումը մի քանի ամիս միայն մնաց Գրանսիական պալատում. գեռ ևս նոր սկսել էր այն տեղ ծանօթանալ, և աշա գնաց Մոնմորանսու հետ պատերազմը ընդդէմ շուգենօթներին, ուր այս երկու երիտասարդ մարդիկը փառաւորեցին իւրեանց անձն։

Ըալէն տասն և ութամսնեայ բացակայութենից յետոյ վերադարձաւ դէպ ի Դուռը, և արդարեւ այն տեղ, այն սոկեփայլ պալատականների մէջ կը մնար ամենեին անծանօթ, եթէ մի գիպուած չուղղէր նորա վիճակը։

Աէն — Ժերմանեան ամրոցումը ստէպ լինումէին նուագածութեան և երդեցողութեան հանդէսներ. այն տեղ կարելի էր լսել երբեմն և իտալական երգիչների, որ Մարիա Մեդիչիսը մի քանի տարի յառաջ բերել էր տուած իւր սիրական Տօսկանիայից։ Լուդովիկոսը, որ չէր սիրում այն բանը, որ նորա միտքն էր ձգում իւր դէպ ի աքսոր գատապարտված մայրը, աշխատումը այնպիսի կերպարանք ցոյց տալ, որպէս թէ այս զրուանքը ամենեին չէին զրադեցնում նորա ու շադրութիւնը։

Հեռացած մի պատուհանի խոր կամարի տակ, տեսաւ նա մի բաղը մութիւն մանուկ պալատականների որ, փոխանակ լսելու, խօսումեին միմեանց հետ. թագաւորը նշանացի արեց նոցա, որ շարունակեին իւրեանց խօսակցութիւնները, և արմունկները հաստատած պատուհանի վերայ, մտածելով նայումեր նաւակներին որ խաղաղ ու հանդիստ լողումեին գետի մէջ:

»Ո՞չ» ասումեր Շալէ կոմսը, որ նոյնպէս գտանվումէր այս մանուկ պալատականների մէջ, »ո՞չ» խտալական Տէնօրը իւր ձայնով և անվերջանալի բեկրեկանքով չարժէ մի անծանօթ երգեցողի ստուերին ևս. ես այդ երգիչի ձայնը լսեցի պատահարար մի քանի օր յառաջ»:

—Ո՞ւր և Բ՞նչ տեղ, — հարց արեցին նորանից :

»Չեմ կարող ասել ճշգապէս, բայց այդ պատահեցաւ Ահն — ծերմաննեան անտառի ամենաթանձր տեղումը. երգիչի ձայնը արձակվումէր մի փոքրիկ աշտարակից, որ ծածկված էր ծառերի քամակում և շինված հետի և խուլ տեղում»:

—Ե՞ւր բանը պատմիր մեղ Շալէ, — ասաց թագաւորը, որի ուշադրութիւնը երևումէր թէ զարթել էր:

»Գիշերը բալորովին մթնել էր. զրօննլով անտառի մէջ, մոլորվեցայ ես ճանապարհից, այս և այն կողմը վաղելով. այն լուս ու մունջ ճանապարհների վերայ չգիտէի, թէ որը նորանից կը հանէր ինձ դէպի ամրոցը: Յանկարծ իմ լսողութիւնը զգաց մի նուադարանի ձայն, որի հետ կապակից էր մի տխուր երգեցողութիւն: Ես գնացի դէպի այն կողմը, ուստի լսվումը այս երաժշտութիւնը և շուտով տեսայ իմ անձը շատ թանձր և համարեա թէ անանցանելի թուփերի մէջ. խոր խաւարը ըրջապատել էր ինձ, բայց աչքերս, շուտով սովորելով խաւարին և օգնութիւն ստանալով մեղմ լուսիցը, որ երևումէր առաջև, կարողացան տեսանել այն փոքրիկ աղօտերև աշտարակը, որի սրածայր գաղաթը առաւել բարձր չէր քան թէ այն կաղնիքը, որոնցով շրջա պատաժ էր նա, և որ ունէր միայն մի նեղ պատուհան, ուստի հնչումէին երաժշտութեան ձայները, որ գրաւել էին իմ ուշադրութիւնը, և երևումէր լըսը, որի մասին խօսեցի այս լուսեիս:

Եցրեցողութեան ձայնը լավումէր շարունակ, և իմ ականջը երբէք փորձած չէր այնպիսի քաղցր, այնպիսի կախարդիչ ներդաշնակութիւն, որպիսի թափկլումէր այն միջոցին իմ չորս կողմումը:

—Չես կարող արդեօք միտք բերել մի քանի խօսք այն երգեցողութենից, — հարց արեց թագաւորը:

»Ո՞չ. ես կարող եմ բոլոր երգը կրկնել: Նա հոգիացած էր մի առանձին տիրութենով: Երևումէր, որ դորա երգիչը աշխարհային ու-

նայնութեան փորձը առած էր կատարելապէս, և նորա ձայնի հնչմունքը նման էին հրեշտակի գանգատի. այնպէս քնքուշ էր այդ ձայնը, այնպէս մաքուր, մինչև թվումէր, թէ սոխակը որ վերջացնելով իւր տաղի մի տունը, սկսանումէր մի այլ, իսկոյն գագարումէր, երբ այս տփուր երգեցողութեան ձայնը վերստին արձակվումէր աշտարակից: Չտեսանելով նորան, որ երգումէր, կարող էի ես երաշխաւոր լինել, թէ նա երիտասարդ և գեղեցիկ մարդ էր, որ նորա երեսը յատկանումէր գունատութեամբ և տիրութեամբ, որ նորա աչքերը ցոյց էին տալիս նորա հոգու բարութիւնը, և պղտորված էին արտասուզքով.... Ո՛չ, ոչ. ես երեք չեմ մոռանալու այն առանձնայած երգիչը և այն յափշտակիչ երաժշտութիւնը, որ այն գիշերը լսելի էր միայն ինձ, սոխակին և անտառի խորհրդաւոր լուսութեամբ.... »

Վիւս օրը Շալէ կոմնը, ստացաւ զլիսաւոր պալատապետութեան հրովարտակ. այս կոչումը ինքն ըստ ինքեան թէեւ չունէր ոչինչ պաշտօն ու պարտականութիւնը, բայց նա շատ կարճ ձանապարհով մօտեցնումէր նորան թագաւորին:

Այս նորհրդաւոր երգիչը, էր ինքն լուդովիկոս երեքտասաներորդը: Թագաւորը, կամեցաւ մօտեցնել իւրեան այն մարդը, որ լաւ քան թէ ուրիշները գիտէր գնահատել իւր քանիքարը, որ ինքը բարձր էր շամարում ամենայն բանից:

Անձնատուր լինելով մելամնաղձի ազգեցութեանը, թագաւորը շատ անդամ առանձնանումէր իւր քնարովը այն աշտարակի մէջ, որի մօտ Շալէ կոմնը լսել էր նորա երգելը:

Այրիտասարդ կոմնի վիճակը թագաւորական գոնումը շատ փառաւոր էր. պակաս էր նորան մի բան միայն, այսինքն յարակցութիւն մի պալատական տիկնոջ հետ, որի սէրը կարող լինել յարուցանել ուրիշների նախանձը գեպ ի կոմնը. բայց և այս երջանկութիւնը յետ չը մնաց երկար: Գեղեցկութիւնը, երինային պարգև է, բայց մի շուտանցական պարգև: Ժամանակը Խլելով նորա փայլը, խլումէ նոյնպէս և նորա նշանաւորութիւնը: Բայց եթէ այդ գեղեցկութիւնը մի երկելի աստիճանաւորի բաժնն էր ընկած, այն ժամանակ նա դառնումէ պատմութեան սեփականութիւն, և խօսքի նիւթ է լինում, անբաժան այն աստիճանաւորի յիշատակից: Այսպէս պատահեցաւ և բուքն հեմին, որ Լուդովիկոս ծագի գոնումը Անգլիական գեսպան էր: «Նա ֆրանսիայում մնաց մի-այն ընդ ամենն երկու տարի, և այն օրից ամբողջ երեք դար չը կարողացան ոչչացնել այն անթարգմանելի զմայլանքը, որ երկում երեակայութեանը, նորա անունը յիշելու ժամանակ: »

Այր նա երեկոցաւ Սէն-ժերմանեան պալատում, ամենիքիան մի-

ագահ հետաքրքրութենով աշխատումէին իմանալ, թէ պալատի գեղեցիկներից որի՞ բաղդն է արդեօք սէր բորբոքել այս մարդու մէջ։ Յառաջ կարծումէին թէ այս նախանձելի վիճակը ընկած է դը Շեվրեօղ դքսուհուն, որ փայլումէր դեռ ևս իւր բոլոր գեղեցկութենովը և պարծենումէր Աւստրիական Անսայի սիրածի անունով։

Ուշագրութիւնը, որ ցայց էր տալիս այս փառաւոր դեսպանը դէպի այս տիկինը և այն երանութիւնը, որ փայլումէր այս տիկինոջ յաղթական երեսի վերայ, արդէն տեղիք չէին տալիս ոչինչ երկրայութեան, թէ նա էր այն ընտրված երջանիկ տիկինը։ և աշա յանկարծ յայտնեց միանգամ թագուհին, թէ Բուքենհամը իւր հետ կցորդ պիտոյ է լինի մի պարահանդէսի։

Աւստրիական Անսայի կողմից մի այսպիսի անօրինակ ողորմութիւն դէպի մի օտար երկրացի, այն շփոթութիւնը, որի մէջ ընկնումէր թագուհին տեսանելով դեսպանը և մանաւանդ թէ այն խորին ատելութիւնը, որ ցայց էր տալիս նա դէպի ի դեսպանի թշնամիքը, այս բոլորը հարկադրումէին մտածել, թէ այն երեւելիք Քրիստանացին համարձակվել է դարձուցանել իւր հայեացքը այն կոոջ վերայ, որի ճակատը պասկված էր թագով, և թէ մինչև անգամ արքայական գահի բարձրութենից արհամարհված չէ դեսպանի սէրը։

Այս դրութեան մէջ էին գործերը, երբ Շալէ կոմսը երեկոյին մի անգամ հանդիպելով Մոնմորանսուն և խօսելով զանազան առարկաների մասին, գարձուց վերջապէս խօսքը պալատական գեղեցիկների վերայ։

»Հրդվումեմ իմ պարծանքով!», բացագանչեց երիտասարդ կոմսը, այս տեղուու ոք զկայ այնպէս գեղեցիկ, ինչպէս դը Շեվրեօղ դքսուհին։

»Ս իմ կողմից, նախապատիւ ևմ համարում մատաղահաս թագուհին, — ասաց Մոնմորանսին մի փոքր ժամանակ մտածելուց յետոյ։

»Աւստրիական Անսայի գեղեցկութիւնը, բոլորովին այլ տեսակ է քան թէ դը Շեվրեօղ դքսուհու գեղեցկութիւնը։ Նոքա երկուքը ևս բաժին են ստացել բնութենից այնպիսի պատուականութիւն, որ բոլորովին հակառականութիւնը նոյց աստիճանին։ Անսան նման է պարկեշտ մանուշակի, իսկ Վալենտինան հպարտ և փառաւոր վարդի։

—»Այդպիսի դիպուածում, նա աշնանային վարդէ, ասաց Մոնմորանսին։

»Վի ծիծաղիր, Մոնմորանսի։ առաջին անգամ երբ տեսայ ես այդ կինը, երբ նորա հայեացքը հանդիպեցան իմ հայեացքին, ևս զզացի, որ նա մեծ աղդեցութիւն պիտի ունենայ իմ կեանքի վերայ։

—Վիթէ ուրիզորումը գեռ ևս հաւատումնն նախազգացութեան բայց ինչ այն ուշագրութիւնը, որ փառաւոր դեսպանը ցայց է տաս-

լիս դքսուհուն և այն բարեհաճռութիւնը, որով դքսուհին լնդունումէ նորան, հարկադրումն կարծել, որ քեզ չէ պատահելու պատերազմիլ նորա հետ, սիրու դրօշակի տակ:

»Բայց խօսումնեն, [թէ բուքենհեմը սառնասիրտ է դեպ ի գեղեցիկ ները, որ կանգնած էին գահի աստիճանների վերայ. տեսանումէ միայն նորան, որ ունէր խսկական գահը, և թէ նա միայն կարողացել էր իւր վերայ դարձուցանել նորա ուշադրութիւնը»:

—Կարելի է.

»Ուրեմն, ի՞նչ պատճառով պասցիր դու ինձ, [թէ դեսպանի սերը դեպ ի դքսուհին, ոչինչ երկրայութեան տակ չէ, մինչ այժմ ինքդ խոստովանումն, [թէ նա պարապած է թագուհու սիրովը»:

—Այն պատճառով, որ մինը խսկան չէ միւսին: Այս մարդու սիրու պարունակումէ իւր մէջ անհատանելի գանձեր. սիրելի Հենրիկոս, դու ինքդ երբեմն կը փորձես այդ բանը:

»Ոչ. դու զրպարտումնս»

—Ուրեմն, փոխանակ որ զուր տեղը ժամանակ կորուսանես իմ վերայ բարկանալով, սկսիր ներգործել . . . ցած դիր դքսուհու ոտքումը քո սէրը, իրագործիր քո յոյսերը, մոիր պատերազմի մէջ և դուրս եկ յաղթանակով. այդ ամենալաւ հնարին է ապացուցանելու ինձ, թէ ուղեղ չէի ես:

Ըալէ կոմը ականջ դրեց խորհրդին, որ նորա սիրու վաղուց ահա շշնջումէր: «Ես ամենայն տեղ սկսից հետեւել դքսուհուն, աշխատումէր անդադար նորա հետ լինել միասին և հաջոյակատար գտանվել ամենայն առաջարկար ու կապայտ դոյները դքսուհու աշքումը նախապարանում: Ծիրանի ու կապայտ դոյները կոմը այս գոյնետիւ էին համարվում քան թէ ուրիշերը, և Ըալէ կոմը այս գոյնետիւ էին համարվում քան ամենայն պատահերը, որ ստանումէր, և ցած էր զնում՝ նորա ոտքումը այն ամենայն պատահերը, որ ստանումէր, և ամենայն օր գրումէր նորան ամենաջերմեռանդ և սիրաբորբոք նամակներ:

Գեղեցիկ դքսուհին բաւական ժամանակ սառն էր դեպ ի իւր երիտասարդ պաշտողի սիրու ապացոյցները և թվումէր, [թէ երբեք ուշադիր չէր նորա վերայ: Այս բանը արդէն սկսել էր յուսահատեցնել կոմը, մինչև որ մի անդամ յանկած և բոլորովին անակնկալ, ստացաւ նա դքսուհուց մի պատասխան, որ լրացուց նորա ուրախութիւնը և իրագործեց նորա բոլոր յոյսերը:

Այն երեկոյին, որ նախընթաց էր այս օրին, [թադուհին պար և կանքուքենհեմի հետ մի շատ կենդանի և գեղեցիկ Սպանիական պար, և յանձնուքենհեմի հետ մի շատ կենդանի և գեղեցիկ Սիւս առաւտին, այն կամայքը, կարծ զգաց իւր մէջ տկարութիւն: Միւս առաւտին, այն կամայքը, որ սովորաբար ներկայ էին լինում նորա զգեստաւորվելուն և շատ լաւ:

գիտէին նորա մատանիքը , նկատեցին , որ նոցանից մինը պակաս է , և թէ նա փայլումէր Անգլիական դեսպանի մատնումը :

Այս այն օրը գը Շեվլեող դքսուհին գրեց իւր պատասխանը Շալէ կոմին :

¶

»Այս գիշերը խաւար է , ինչպէս դժոխք չես իմանում թէ գէպ ի սր կողմը շրջես ձիդ»:

— Առանի փայլողութիւնը երբէք ախորժելի չէ եղած ոչ սիրահարված և ոչ դաւաճան մարդերի . և դու , Շալէ , լինելով և սիրահարված և դաւաճան , չէ պիտոյ գանգատես գիշերային մժութեան վերայ :

»Դորա հակառակ , ես մտածումեմ , սիրելի Մոնմորանսի , որ ոչ այսպէս եմ և ոչ այնպէս : Ես յօժարութեամի կը տայի իմ կեանքը նոցա , որոնց անձը սիրումեմ . նոցա փրկութեան համար , պատրաստ էի ամենայն զրկանք յանձն առնուլ առանց նայելու այն անդունդի վերայ , որ լինելու էր ոտքիս տակումը . բայց այդ ամենամաշէ պատուասիրութիւնը , այդ խորհրդաւոր , սարսափելի ախտերը , որ հալումնն երկամը , և թաք են կենում մութի ու մառախուղի մէջ , իմ համար չեն . ես ստեղծուած չեմ նոցա համար : Մի հարստութիւն որ յարմար էր իմ կոչմանը , մօրսներկայութիւնը , որ ընծայել էր ինձ իւր բոլոր կեանքը , և սէրը այն կնոջ , որին ես ուրախութեամի կը տայի իմ հոգու բոլոր զգացմունքը և մտածութիւնքը . սոքա են աչա այն բոլոր բաները , որոնց ցանկանումէի ես : Մեք գաւառական բնակիչներ ենք , պատուասիրութենից հեռի . մեղ տուած է մի առաւել քնքուշ զգացողութիւն , հոգու հաստատութիւն և մեր ցանկութեան մէջ

— Քանդ , սիրական կուս . և թէ մեք լինեինք Սօրբոնեան դահլիճներումը , ես ուրախութեամի վէճ կը բանայի քո հետ բնաւորութենների զանազանութեան և հոգու թուլութեան ու հաստատութեան վերայ . բայց մի չար բաղդով մեք բոլորովին այլ գրութեան մէջ ենք : Մեր չորս կողմը խաւար գիշեր է , մեր առաջն կայ մի դժուար անցանելի նեղ ճանապարհ , և մեք շտապումնք , թէ և կամաց կամաց , տեսանել այն մարդիկը , որ պատրաստումէին մի մեծ փոփոխութիւն տէրութեան մէջ , որ կարող էր մեր գլխի գինը լինել : Եւ այսպէս լաւ չէ , որ գագար առնունք և աշխատենք հաշիւ ու համար տալ մեղ , թէ ուր ենք գնում և ինչ խորհրդով :

«Ես կարծումմամ , որ մեք երկուքս ևս վաղուց գիտենք այդ բանը»:

— Այս , բայց ընդհանրապէս : Եւ ես կարծումմամ , որ եթէ այս

առարկայի վերայ մի քանի հարցմունք առաջարկելի քեզ, դու շատ չեշտ պատասխանելու չէիր դոցա. զոր օրինակ, ուր ենք գնում մեք այժմ այսպիսի մուժն գիշերում :

»Եթե այդն Գաստօնի մօտ, ինչքան ես գիտեմ, այն գիտաւորութեամբ, որ խօսենք այն հնարների վերայ, թէ ինչ կերպով կարող ենք կարծանել իւր տեղից Գիտոնի եպիսկոպոսը, որ անուանվումէ այժմ կարդինալ գը Իշելիեօ» :

— Ըստ բարի, բայց ինչու համար :

« Եղուա համար, որ թագաւորի եղայր Գաստօնը, և թագուհի Աւստրիական Աննան ատումնն նորան » :

— Բայց նոքա ինչ պատճառով ատումնն :

« Գաստօնը նորա համար, որ կարդինալը հեռացնումէ նորան թագաւորից » :

— Եպա թագուհին :

Ըալէ կոմը լոեց :

« Դու լուս ես կենում », ասաց Մոնմորանսին, բարի ուրիշն, ես կը պատասխանեմ քո փոխանակ. Քիշելիեօն ատելի է Աննային այն պատճառով, որ նա վարդումքը շատ մեծարական կերպով Անդիսական հյոյակապ դեսպանի հետ, որ, ինչպէս խօսումն, առաւել բաղդաւոր է, քան թէ կարդինալը. բայց այս բաղդաւորութիւնը կարծես թէ բոլորովին անախորժ է Ծալէ կոմին, որի հետ, բաղդի շնորհելովը, խօսակից եմ այժմ, որ և ուրախանումէ զուքս բուքենհմի յառաջադիմութենների վերայ. պատճառ, այդ յառաջադիմութիւնքը հեռացնումն նորան գը Շելիուզ դքսուհուց, որին

— Քէ Աստուած կը սիրես, լուս կաց, — բայց աղանձնչեց Ծալէ կոմը, որին բաղդը պարկեցտացուցել էր, — այս մասին ոչ ում բան չասես, մի՛ հաւատար մինչև անգամ և գիշերի լուսութեանը :

» Ե՞՞չ սիրելի, նա չէ կարող լսել մեր խօսքը, և եթէ աստղերը փոխանակ ամպերի տակ ծածկվելու, նայէին մեր վերայ, հաւատի կը լինէին, որ երիտասարդ, գեղեցիկ, քաջ Ծալէ կոմը ոչինչ ժամանակ կարող չէր, թէկ շատ պարկեշտ էր, թաքցնել իւր յառաջադիմութիւնքը . . . բայց, դառնանք դէպ ի մեր խնդիրը. ինչ կը լինի, և թէ կորչի կարդինալը :

— Քաղաքաւորի շնորհները կը թափվին Գաստօնի վերայ. բայց ի սոր բանից նա կը ստանայ Շարժրեան, Բլուայեան և Գիտոնեան գեղեցիկ դքսութենների կառավարութիւնը :

« Ո՞ւր ինչ կ' առնունք դորանից » .

Ո՞ւր . . . մեք . . . մեք ձրի կը խմնեք բուրգուեան գինին :

»Եւ այսպէս, այս բոլոր բաների փոխանակ, եթէ մեք կենդանի մնանք, մեր բաժինը լինելու է միայն մի կնոջ ժպիտ և մի փառաւոր ընթրիք. շատ շնորհակալ եմ»:

— Առնմորանսի. եթէ այդպէս ես մատածում գու, ուրեմն ինչ պատճառով միաւորվեցար մեր հետ. . . . գու լուռ ես մնում, բարի. ուրեմն, ես կը պատասխանեմ քո փոխանակ. այն պատճառով, որ քո հայրը և պապը ունեցել են Կոնետարլի կոչումը, իսկ գու առանց միտ գնելու քո փառաւոր քաջազործութեններին, զուր տեղը սպասումն այդ կոչմանը։ Այսպիսի անիրաւութիւնը հարկադրումէ քեզ միանալ Ռիշելիե կարդինալի հակառակորդների հետ։

«Կարելի է . . . բայց լոյսը, որ գու տեսանումնս այն տեղ, և ձիերի խրինջոցը, որ հասանումէ մեզ, հարկադրումնն ինձ մտածել, որ մեք հասանք վերջապէս արքայադնի գաղտնի պատսպարանին»։

Երիտասարդ մարդիկը արդարև հասան իւրեանց ձանապարհորդութեան նպատակին, և մի ըոպէ յառաջ, լինելով գիշերի մժութեան մէջ, յանկարծ երկեցան փառաւոր գահիների մէջ, որ վառվումէին ձրագներից և զարդարած էին ոսկով ու ծաղիկներով։ Այս գահիների մինի մէջ գրած էր սեղան, որի չորս կողմումը նստուած էին գաստօնի քնաթաթախ կողմնակիցքը. նոքա էին ձենրիկոս չորրորդի որդիքը, երկոքին Վանդումքը, Սուասօնները, Լօնգվելները, դ'Էլերօֆ և դ'Էպէրնոն դուքսերը, Մարկիու դը լա Վալետքը, դը Կանդալ Կոմնը և Գաստօնի այլ բարեկամքը որ, ինչպէս ինքը Գաստօնը, սիրող էին բերկութեան և զուարձութեան, որ այնպէս սեպհական է երիտասարդ հասակին, և որից նորա երկշուր եղբայրը օտարանումէր։

Այս էր պատճառը, որ գահինձը ցոյց էր տալիս մի ուրախ ինջոքի ժողովարան, քան թէ դաւաճանների բոյն։

Այս ժողովի գլխաւոր խորհուրդը էր, համեղ ընթրիք վայելել և ուրախանալ. ինչ որ վերաբերվումէ դաւաճանութեան առարկային, այն համարվումէր երկրորդական բան, և նորա մասին ինչպէս երկումէ կարելի էր յետոյ ևս մտածել։ Եւ այսպէս արքայադնի մօտ բոլոր հաւաքված բարեկամները սկսեցին ուրախութեամբ ընթրիք ուտել, և միամյան վերջին կերակրից յետոյ Գաստօնը մի կարճ յառաջաբանութեամբ առաջադրեց հետեւեալ կերպը։ Որովհետեւ Կարդինալը այն միջոցին գըտանվումէր իւր Լիմուրեան ամարանոյումը քաղաքից դուրս, որ մօտ էր ֆօնտենէրլօխին, այս պատճառով կարծումէր Գաստօնը թէ հարկաւոր էր գնալ այն տեղ, որս առնելու անունով, և ձանապարհի վերայ մտանել Մինիստրի տունը, որպէս թէ նախաճաշիկ ինդրելու համար։ Այն տեղ դժուար լինելու չէր որսորդներին կոիւ սկսանել տան մարդերի հետ։

Ներս կը մտանէին արքայազնի ճանապարհորդակից ձիաւորքը և այս ընդհանուր խառնակութեան մէջ կը սպանվէր կարդինալը :

«Մարդասպանութիւն» ասաց Մոնմորանսին, և ամօթը կարմրութեամբ ներկեց նորա երեսը :

— Ապանել այդ մարդը, կամ սպանել մի վարազ, (վայրի Խող) որ աւերումէր մեր անտառները, բոլորովին մի և նոյն է. Ճշմարիտ, Յիշելին կարդինալը աւելի լաւ չէ, քան թէ մի վարազ—պատասխանեց Գաստոնը, և այսպէս մեք գնումենք մի կարդինալ որսալու. այդպէս չէ, պարմներ. այս վճառծ բան է:

«Ո՞վ կը հասուցանէ կարդինալին սահմանած հարուածը»:

Վանեքին լուսնն :

— Ես ի՞նչ բան է, ոչ ով չէ՝ պատասխանում: — Գաստոնը յօնքերը հաւաքած, նայեց մին մին բոլոր բազմականների երեսին:

— Ոչ ով չէ՝ պատասխանում: — Կրկնեց նա, — շատ բարի. ուրեմն ես ինքս կը կատարեմ այդ գործը:

«Ոչ, արքայազն, ոչ» բացագանչեց Շալէն, «ես թոյլ չեմ տալու ձեզ մինչև այդ տեղ անարդել ձեր անձը, որ ձեր յատուկ ձեռքով գործ կատարելիք այն տեղ, ուր ձեզ պիտոյ է միայն հրամայել. ես յանձն եմ առնում զարկել Բիշելիեօին»:

— Ե՞ս ձեզ իւր ձեռքը, կոմս Շալէ, ես երբէք չեմ մոռանալու այս բոպէն, — ասաց թագաւորի եղայրը:

«Կեցցէ Շալէ»: բացագանչեցին բոլոր բազմականները, և գինին փրկրեցաւ բիւրեղեան բաժակների մէջ, որ խմումէին երիտասարդ քաղի կենացը¹⁾:

Լուսաբացին բոլորեքեան բաժանվեցան միմեանցից և ջոկ ջոկ ճանապարհ ընկան դէպ ի Փարիզ, և դէպ ի Սէն-Փերման, ուր այն ժամանակին դտանվաւմէր պալատը:

Շալէն գնումէր մենակ, առանձին ճանապարհով ֆօնդենեբլոյն եան անտառի եղերքով. անտառի մօտ կար բաւական խոր փոս, որ լըցաված էր ջրով սաստիկ անձրեկից, որ արդէն մի քանի ժամ անդադար վալիս էր: Երիտասարդ կոմսի բաւական շոյտ ընթացքից, նորա սրի կապը կտրվեցաւ, և գլորվելով փոսի մէջ ամրացաւ նորա զառիվայրումը, մի ծառի ճիւղի վերայ, մի քանի ոտնաչափ բարձր, ջրի մակերեսութիւց: Այս սրակազը զարդարած թանգագին գոհարներու ընծայել էր կոմսին Վալենտինան: Շալէ կոմսը մտածումէր, թէ ի՞նչ կերպով

1) Վենաց խմել¹⁾, այսինքն մի մարդու կեանք բարեմաղթելով գինի խմել, կամ նորա կեանքի համար խմել. այս ոճը կարծեմ թէ ընդհանուր մինի հացերի մէջ:

կարող է վերստին ստանալ իւր դէպ ի փոսը գլորված սրակապը, և յանկարծ տեսաւ իւր քամակումը մի մարդ, որ թռաւ իջաւ փոսի մէջ, բոնեց կապը և շուտով դուրս էր դալիս ջրիցը։ Շալէն կարծելով, թէ դա մի խաբեբայ մարդ էր, կամցաւ ընկնել նորա քամակից, բայց այն մարդը ինքը մօտեցաւ կոմսին և տուեց վեր առած թանգագին բանը։ — Ենորհակալ եմ՝ քեղանից, բարեկամ, — ասաց կոմսը։ — ինչպէս երկումէ, դու երկիւղ չունիս ոտքերդ թացացնելուց։

«Շալէ կոմսին մօտենալու համար, կարելի էր յանձնն առնուլ այդ բանը»։

Կոմսը տեսանելով, որ ճանաչեցին նորան, դարձուց իւր քննող հայեացքը այս անծանօթ մարդու վերայ, որպէս զի իւր կողմից ինքը ևս հաւասուէ, թէ այն չէր ճանաչում այդ մարդը։

Այս մարդու բարձր հասակը, կարծումէր նա թէ մի տեղ տեսած է։ կարելի է տեսել էր նորան ստուերի պէս, որ լուսաբացի առաջին ճառագայթների երկելովը սահման էր կոմսի աչքից Շեվընողեան դազանպցի ճանապարհներումը. . . . կոմսը չը մնալով այս մտածութեան մէջ, տուեց նորան մի քանի դրամ և շարունակեց իւր ճանապարհը։

Ուն - Ճերմանեան լրիկ ամրոցը երևեցաւ անտառի քամակից, որ լուսաւորված էր մտանող արևի վերջին ճառագայթներով։ Ամրոցի մօտ եղած պարտէղների մէջ զբօննումէին այն բոպէին ջոկ ջոկ կամ բաղմութեամբ պալատի երկելի մարդիկը, սպասելով այն ժամին, երբ բացվելու էին արքայական բնակարանի դահլիճները, ուր պիտոյ է սկսան վէր պարահանդէս։

— Տեսանենք պարոններ, — բացադանչեց յանկարծ Բասսամզիները, այսպէս շարունակելով սկսած խօսակցութիւնը իւր շրջակայ երիտասարդների հետ։ — Ալ ձեզնից զոհ կը բերէ իւր հարստութիւնը այն կնոջ համար, որին սիրումէր։

«Ես», բացադանչեցին մի և նոյն ժամանակ բոլոր երիտասարդքը։

— Եւ դուք զոհ կը բերէի՞ք նշյանպէս և ձեր կեանքը։

«Եւ կեանքը», պատասխանեցին մի քանի ձայներ։

— Եւ թագաւորի դէպ ի ձեղ բարի շնո՞րհը։

»Այսուհետու պատասխանեց մի միայն Շալէ կոմսը։

Այս միջոցին ամրոցի ճակատը լուսաւորվեցաւ յանկարծ ամենափառաւոր կերպով։ Բացած պատուհաններից երեսումէին խնջուքի համար պատրաստված դահլիճներում զանազան դոյներով բիւրեղեան ճրադարաններ, որ պատած էին ծաղիկներով։ Բոլոր պարտէղե մէջ դտանդողքը շտապումէին դէպ ի ամրոցը։ Նոցանից երկուքը միայն, փոխանակ թռչելու և գնալու դէպ ի ամրոցը, ինչպէս թուչումէ թիթեռնակը դէպ

ի ճրագը, ուղղեցին իւրեանց զնացքը դէպ ի պարտէզի այն բաժինը, ուր մատուից ընկած ստուերը թանձրանումէր գիշերային խաւարից, և ուր միայն մի աղօտ կանթեղ վառվումէր ամենայն գիշեր, գոթական կերպով շինած մատուի ճակատումը:

Դը Շեվրեօղ դքսուհին և Շալէ կոմնը, (Նոքա էին այն երկու մարդ գիկը) բազմեցան լուռ ու մունջ փշապատ նստարանի վերայ: Դքսուհին, անձնատուր եղած մոսյլ ու տրտում մտածութեների, որ պատառութումէին նորա սիրալ, իսկ կոմնը կատարեալ չամարելով իւր երջանկութիւնը, ըստ որում կարող էր յայտնել նորան որին սիրումէր, թէ իւր հրաբորբաք ցանկութիւնը շուտով կատարվելու էր, թէ նա ամենայն բան զոհ էր բերում սիրուն, իւր ապահովութիւնը, իւր զայլոց օրերը, թագաւորի բարեկամութիւնը, իւր շնորհակալութիւնը, իւր պարտականութիւնը: Այն զմայլեցուցիչ բոպէն, երբ նա կարող էր ասել իւր սիրական կնոջը, թէ ահա ինչ բան կատարեցի քո համար, մօտենումէր արդէն: բայց նա գեռ ևս չեռացնումէր այդ բոպէն, որ առաւել լաւ, առաւել կատարելապէս կարողանայ վայելել նորա երջանկութիւնը:

«Ասի և յառաջ դքսուհին միջատեց լուռութիւնը և ասաց տիսուր և ողբալի ձայնով, «Ճենրիկիս, դու այս բոպէիս սուր խօսեցիր»:

—Ե՞ս, դքսուհի:

»Վայու, դու ասացիր, թէ պատրաստ ես զոհ բերել քո սիրական կնոջը ամենայն բան աշխարհի երեսին, ևս չեմ տեսանում այդ բանը»:

—Ա ալենախնա, այդ յանդիմանութիւնը անզգայշ է:

»Ոչ, ոչ, այս յանդիմանութիւն չէ: դորա հակառակ լաւութիւն կ'առնես ինձ, չը կատարելով քո խոստումնքը.... այն անդադար վիշտերը որ հասուցանումէ ինձ իմ թշնամին, այն հալածանքը, որ նա յառաջնումէ իմ մէջ այն ցաւեցուցիչ մտածութիւնը, որ ես սիրալիել եմ կարծելով մէր գտանել քո մէջ. այն ծանր և տիսուր ստուգութիւնը, որ պատել է այժմ իմ հոգու վերայ, ահա սոքա բոլորը հարկադրումնն ինձ վնասել, կատարել այն դիտաւորութիւնը, որ վաղուց գոյացուցել է ահը իմ սրտի մէջ.... ես հրաժարվումեմ պալատից ու աշխարհից....»:

Վայս բոպէիս լալեցաւ ամրոցի բաց պատուհանների միջով ուրախ և ներդաշնակ երած շտութեան ձայն:

—Լսիր, Վալենտինա, —ասաց Շալէն. «այս աշխարհը գանչումէ քեզ. նա ասումէ, թէ դեռ ևս խունկ ու կնդրուկ է պատրաստել քո համար, թէ ընդունելու էր քեզ իւր գրկի մէջ.... նորա ձայնը զուր չէ լալում, ականջ դնենք նորան: Դը Շեվրեօղ դքսուհին, հանեց իւր

զգեստի տակից մի թուղթ «աշա, Հենրիկոս, մի նամակ, զնական թեղի մօտ և ընթերցիր. այդ նամակը ուղարկված ինձ է Կարմելիտեան վանքի մայրապետից»:

—Այս ի՞նչ բան է, Վալենտինա, —հարց արեց Շալէն, յետ տառապ նորան թուղթը, որ շուտով և հարևանցի կարդացել էր:

«Քաէ վանքի մուայլուս պատերի մէջ շուտով կը մոռանամ ես ամենայն հոգս և ամենայն զուր և խարեբայ յոյսեր, որ թունաւորումէին մեր կեանքը»:

Շալէն հեռացաւ մի քանի քայլ և վերադառնալով Վալենտինայի մօտ, տուեց նորան մի փունջ վարդ, որ այն րոպէին քաղել էր:

«Վանքան ժամ՝ անցանելուց յետոյ, որքան այս ինջի մէջ վարդեր կանց, ասաց նա, »քո վոկէժը կը հանվի քո թշնամուց, և դու կը երեխս պալատի մէջ առաւել մեծակարող, առաւել հզօր, քան թէ եղած էիր երբ և իցէ»:

—Արդեօք ճշմարիտ է ասածդդ:

Երդվումեմ»:

Եւ դու, Հենրիկոս, դու

Ես կամ պիտի մեռամիմ, կամ պիտի սիրեն ինձ»:

Այս անցքից մի քանի րոպէ յետոյ, զը Շեվոնով դքսուհին արդէն ինցոյքի միջումն էր, այնպիսի պայծառ երեսով, որ նորա վերայ ուրախութիւնը շողշողումէր աւելի փառաւորապէս, քան թէ զարդերի անգամանդները. իսկ Շալէն գնումէր այն ձանապարհով, որ հանումէր դէպի ի Լիմուր, ուր պիտոյ է հաւաքվէին կարդինալի թշնամիքը :

¶

Իշելիեօ կարդինալի տունը, որ անուանվումէր Վիմուր, Փարիզ և քօնտեներլո քաղաքների միջոցումը, երևելի էր իւր պարզ գեղեցկութենով: Պարտէզը, որ շրջապատումէր նորան, զարդարած չէր խուզած ծառերով. լայն ձանապարհը, որ տանումէր դէպի ի տունը, զարդարած էր բարձրահասակ կաղնիներով, բայց չունէր կանաչ դաշտավայր: Պալատականքը, որ գուշակումէին, թէ երիտասարդ եպիսկոպոսի կարողութիւնը պիտի ժամանակով ստանայ առաւել յառաջադիմութիւն, այնքան ստէպ շրջշրջումէին այս ձանապարհի վերայ, որ ոտնակոխ էին արել բոլոր դաշտավայրը: Լուսաբայի առաջին ձառագայթները արձակվեցան այս ձանապարհի վերայ, լուսաւորելով արքայազն Գաստոնի խումբը, որի առաջնից գնումէր ինքը արքայազնը, իւր աջ կողմում ունելով Շալէ կոմը: Կողա քամակից փառաշեղ հագուստով գնու-

մէին այն բոլոր երիտասարդ մարդիկը , որոնք դեռ ևս օրամուտին գանգատած էին իւրեանց աղքատութեան վերայ , մինչ այսօր բոլորի կուրծքերը զարդարած էին թանգագին քարերով . նոքա ամենեքեան հաղնված էին որսորդական կերպով և ուրախ անհոգութեամբ շտապումէին սպանել կարդինալը նորա սեպհական տան մէջ :

Ո՞անկլաւիկները գնումէին քամակից . նոցա հանգերձքը լինելով մի շատ կարծ կանաչագոյն վերարկու , և նոյն գունով բաճկոն , և կարմիր վարտիք , որ կապած էին ոսկեթել կապերով , ցուցանումէին , թէ այդ մանկլաւիկները պատկանումէին թագաւորի եղբօր պալատին :

Ո՞իշելիեն միայնակ էր իւր ամարանոցի մէջ քաղաքից գուրս . դէպի ի այդ տեղ մօտենումէին վալմասուն հատ շատ լաւ զբահաւորված մարդիկ , շատ հաստատ իւրեանց մտքումը դրած , որ այս տան տէրը միւս աշխարհի ուղարկեն :

Քնէպէտ և այս գարանագործ մարդիկը շատ անհմուտ էին այսպիսի դործերի մէջ , այնու ամենայնիւ չէր կարելի մտածել , թէ կարդինալը կարող էր ազատվիլ այն փորձութենից , որ պատրաստել էին նորան այս գլուխ կտրողները :

Ո՞ի քանի բովեից յետոյ այն ատելի հոգեւորի սրտումը պիտի ցըցվէր թրի բարակ ու նուրբ սրած ծայրը , և եթէ հարկաւոր լինէր , յեսուն ինն ևս նոյնպիսի սրեր պատրաստ էին օդնութիւն հասանելու առաջին սրին իւրաքանչիւր ոք զգումէր , թէ հեռի չէ այս բովէն , և սորա մօտենալը մի գաղտնի սարսափ բերեց ամենեցուն սրտի վերայ արդէն հեռի չէր տունը մնումէր միայն անցանել ձանապարհը նոքա մօտենումէն նորա ծայրին և կանգնումն պատշպարհի մօա :

Յանկարծ նորա առաջին աստիճանի վերայ երևումէ թշելիեն , դարձուցանելով դէմքը դէպի ի գաստօնը , ասումէ նա . « Ձեր արքայադարձուցանելով կան բարձրութիւնը բարեհաճել է այցելութիւն առնել իմ տանը . ևս կան բարձրութիւնը կը համարէի իմ անձը , եթէ թոյլ տայիք ինձ ընդունել շատ երջանիկ կը համարէի իմ անձը , եթէ թոյլ տայիք ինձ ընդունել ձեր պէս հիւրը ամենայն պատշաճ պատուով . բայց որովհետեւ գուրք կամք այս տեղ հանգստանալ միայն , ուրեմն շատ քաղցր էր ինձ թողուլ իմ տունը ձեր կամքին ու հրամանին :

Կարդինալը ասելով այս խօսքերը , բայց պատասխանի չը սպասելով , խօնարշութեամբ գլուխ տուեց , յետոյ նստեց կառքը , որ պատրաստ կանգնած էր , և հեռացաւ ամենեին արագապէս :

Պատագիրքը զարմացած նայումէին միւսի վերայ , չը գիտելով թէ ինչ պիտոյ է առնել , բարկանալ արդեօք , թէ ծիծաղել բայց շուտով ծիծաղը ստացաւ աւելի տեղիք և նոքա աղաղակելով ու ծիծաղի լով տուն մտան , ուր նոցա կտրիծութեան առաջն բացվեցաւ

մի պատերազմ վայրի հաւերի հետ։ Այս հաւերից հանեցին նոքա իւր եանց վրէժը, և շուտով այս խաղաղ տան սենեակները թնդացին աղաղակից ու երգից, որ այդ տունը գուցէ երբէք լսած չէր։

Կախաճաշիկը, թէև շատ շտափ պատրաստած, այնու ամենայնիւ շատ համել էր. այս բոլոր չար երիտասարդները, որոնց սիրաը ընդունակ չէր երկար ու բարակ չարութեան, և որոնք ուտումէին ծիծաղելով, ուրախութեամբ շրջապատեցին սեղանը։ Աերջին կերակրից յետոյ սկսվեցաւ գինարբութիւնը, և առաջարկեցին բաժակներ դատարկել սորա և նորա կենացը։ Մինի կենաց խմելու ժամանակին, երկու միմնաց զարկված բաժակներ կտրվեցան և միջի գինիքը խառնվեցան։

»Հարսանիք կը լինի, հարսանիք կը լինի, ձայն տուեցին ամեներեան ով է ամուսնանում ձեզանից, պարոններ։

Այս սովորական գիպուածը աչքի տակ ընկնելու չէր, եթէ զրեթէ նոյն ըստէին թագաւորական մանկակիներից մինը, որ հասել էր Փարիզից, չը մատուցանէր Գաստոնին մի ծրար, կնքած Լուդովիկոս ժԳի կնքով։

Կաքայակնը քանդեց կնիքը ծրարը պարունակումէր իւր մէջ մի երկար նամակ, որով թագաւորը նոր ի նորոյ խնդրումէր իւր եղօրից և առաւել շատ աղաշանքով, քան թէ երբ և իցէ խնդրած էր, ամուսնանալ օրիորդ Մոնպանսիէի հետ, խոստանալով, եթէ Գաստոնը հաւամ էր այդ բանին, մոռանալու է ինքը բոլոր անցածը և հաշվելու կատարելապէս Նորին Բարձրութեան հետ։

Կամակի հետ դրած էր մի աշագին հարստութեան ցուցակ, որ առաջարկված հարսը որպէս բաժինք բերելու էր փեսային, և պատկերը հարմանացուի, օրիորդ Մոնպանսիէի որ մեծացած լինելով հարաւային ֆրանսիայում, յայանի չէր գեռ ևս պալատի մէջ։

»ԵՇ ապարոններ» բացադանչեց Գաստոնը, «ահա ձեզ մի այլ գործ կարդինալի կողմից, որ անտարակցյա թելագրել էր թագաւորին գրել այս նամակը։ Բայց մի և նոյն է, ես հաւատարիմ կը մնամ իմ բարեկամներին, թէև հասանելու լինէր ինձ աղքատութիւն և մահ։ Թող կարդինալը խլէ ինձանից իմ ստացուածքը, եղբօրս բարեկամութիւնը, այսու ամենայնիւ ես կը մնամ կամակից նոցա հետ, որոնց հալածումէ նա։ Ես պատկանում ֆրանսիական ազնուական տոհմին, ես պարտական եմ պաշտպանել նորա հին իրաւունքները, և որքան առաւել կարդինալը ընդգէմ դուրս գայ այն իրաւունքներին, ես այնքան ևս աւելի ջերմութեամբ պիտի հակառակ լինիմ նոցա։

—Կպրի արքայակնը, ապրի մեր աղնուական կտրիճը։

Այս բացադանչութեների մէջ ջալէն միայն մնաց անհանգիստ մի

գաղտնի երկիւղից, թէև սրտումը ուրախանումէր այն բանի վերայ, որ իւրեանց մոքի մէջ դրած գործը ստացաւ այսպիսի ընթացք: Մարդասպանութիւնը, այն ժամանակին մի մեծ, երևելի բանի կարգում չէր. բայց Շալէի բնաւորութեան թուլութիւնը դրդումէր նորան յետ քարշ վել այնպիսի բաներից, ուր նորա կամքը պիտոյ է երևեր ինքնապէս գործակատար:

Չունելով կամքի հաստատութիւն և վճռականութիւն, որ անշուշտ պէտք են այր մարդերի, դոցա փոխանակ ունէր նա մի բարի, սիրող, և մեծահոգի սիրտ: Անառակ պալատը, ուր նա գտանլումէր, չը կարողացաւ գին դնել այդ արժանաւորութեներին. այդ արժանաւորութիւնը չճանաչեցին, ոչ երիտասարդ կոմսի բարեկամքը, և ոչ, գուցէ թէ այն կինը, որի համար պատրաստ էր կոմսը ամենայն ինչ զոհ բերել: Մի և մի հատ արարած միայն բոլոր աշխարհի վերայ սիրումէր նորան այնպիսի սիրով, որին արժանի էր նաև.... այդ, նորա մայրն էր, մի աղջիւ կին որ գեռ ևս պահպանումէր իւր հոգու մէջ ջերմ հաւատ գէպի Աստուած, և մոերմութիւն գէպի ի Շուշանեանց գահը¹⁾:

Դիւ Շեվրեօզ դքսուհին մենակ էր, և հանդստացած փոքրիկ և ցած նստարանի վերայ, երևումէր տխուր, և արտասուքի հետքերը երևումէին նորա գունաթափ թշերի վերայ: Շալէ կոմսը, որին ճանաչումէին ամրոցի սպասաւորքը, խաղաղութեամբ ներս մտաւ դքսուհու առանձնարանը:

»Ո՞ի լար, Վալենտինա», ասաց նա. «մ' լար, գեռ. ևս կարող է ամենայն ինչ ուղղվել. և Քիշելիեօն չաղատվեցաւ մեր ձեռքից այնպէս, որ ամենեին ապահով լինի մեղանից»:

— Ա՛հ, — բացագանչեց դքսուհին բոնելով Շալէի ձեռքը և սեղմերով նորան իւր կուրծքի վերայ, — մ' կարծիր իմ մէջ այնքան անձնասիրութիւն. թէ Աստուած կը սիրես, այդպիսի կասկած մ' տանիր իմ վերայ.... իմ լացս չէ իմ վերայ այլ քո վերայ, ով իմ սիրական.... ինչ որ այսօր պալատումը խօսվեցաւ, էր միայն կարդինալի և մի անյաջող գաւաճանութեան մասին.... քո անունը ստեղ ստեղ կը կըն վումէր.... ես լսեցի այդ բոլոր բաները.... և չը գիտելով ոչինչ, վշտանումէի և տամնջվումէի զարհուրելի անհանդստութեան մէջ: Ո՛հ, ինչպէս հարկաւոր էր ինձ տեսանել քեզ, ձենրիկոս:

Շալէն առանց մի բան թաքցնելու, պատմեց Վալենտինային, ինչ որ պատահել էր կարդինալի տանը....

1) Շուշանեան դահ ասվելով իմացվում բուրբնեան տունը, որի նշանը էր Շուշան:

»ԱՇ անբաղդ, դու այժմ ի՞նչ ես մտածում առնել:

— Ես խոստացել եմ աղատել քեզ թիշելիեօ կարդինալից:

»Իսկ դու ի՞նչպէս կարողացար այդպէս անզգուշաբար քո կեանքը վտանգի տակ ձգել»

— Խմ պատիմքը կը լիներ միայն մի ժամանակաւոր աքսոր:

»ՈՇ, ոչ այդ քո կարծիքը զուր է. ամենայն մարդ խօսումէ այն վտանգի վերայ, որ պիտոյ է շուտով հասանի քեզ. . . . ճշմարիտ է, իմանալով մեր հաղորդակցութիւնը միմեանց չետ, գուցէ թէ զիտութեամիւ մեծացնումէին իմ առաջև այն անբաղդութիւնը, որ պիտոյ է դայ քո գլխին. բայց մի և նոյն է. քեզ արժան էր արդէն ճանապարհ դուրս գալ դէպ ի Հոլլանդիա. . . .»

— Ո՞՞ի թէ պէտք էր թողուլ քեզ, ով Ալենտինա, թողուլ քեզ մի այնպիսի վտանգի երկիւղից, որ գուցէ թէ իրադործլած էր մի միայն երեակայութեան մէջ

» Աստատումնն, թէ թագաւորը մահու պատիմք կը տայ իւր սիրական կարդինալի սպանողներին»:

— Լուդովիկոսը խիստ մարդ չէ:

» Եա գեռ ես ժամանակ չէ ունեցել այդպէս լինելու. նա այնքան երիտասարդ է, բայց սպասենք. . . . ով դիտէ, թէ ի՞նչ կը լինի ապագայումը

Տիտուր գունաթափութիւն ծածկեց զքսուհու երեսը. սիրտը խըսոված այն վտանգից, որ պիտի հասանէր երիտասարդ սիրողին, նա ուղղեց նորա վերայ իւր արտասուալից հայեացքը և լուռ լուռ շոշափումէր կոնի թուխ և թաւ մաղերի գանգուները

Ո՞ի քանի ժամկից յետոյ, Շալէ կոմնը զնաց Շելքոզեան հովտի միջով, որի խոր տեղումը կառուցած էր դքսուհու ամրոցը, փակված ծառերի թանձր ստուերով: Աշոնը մօտենումէր իւր վախճանին. Շալէն հեռանալով իւր սիրական կնոջ բնակարանից, քաղումէր ճանապարհի վերայ պատահած վերջին ծաղիկները, ինչպէս մի բոպէ յառաջ քաղեց վերջին ուրախութեան վարդերը, որ սահմանված էին նորան իւր կեանքի մէջ:

Ե.

» Ի՞նչ սառն է, ի՞նչ կոշտ է այս երկիրը. . . . ԱՇ, թէ Աստուած կը սիրես, բեր այս տեղ մի փոքր յարդ. . . . Մի ամիս յառաջ ով կարող էր հաւատալ, թէ մի խուրձ յարդ լինելու էր ինձ այսքան ցանկալի ու փափագելի»:

« Անտապետը մօտեցաւ Շալէ կոմին և ձգեց մի փոքր յարդ։ « Ի՞նչ ծանր են այս շղթայքը, նոքա կտրումեն իմ ձեռքերը, ձնշումեն իմ մարմինը . . . գեղեցիկ ապարանաջանք, հիանալի՛ օղամանեակը Նորա համար, որի ձեռքերի վերայ մի ժամանակ փայլումէին ֆրանսիայի ամենապատուական գոհարները, և որի կուրծքը ծածկած էր ոսկի օղերով, որ կրումէին խրեանց վերայ սուրբ Միքայէլի և սուրբ Հոգւոյն ասպետութեան նշանները . »

« Անտապետը վեր առաւ ունելին և մի փոքր լսջնացաւց ձեռքի կապերը, այնպէս, որ յետոյ չեին կտրում ձենրիկոսի ձեռքերը։ « Կոյն բոպէին, երբ բանտապետը խոնարհեցուց իւր գլուխը դէպ ի երիտասարդ կոմսի ձեռքերը, աշխատելով լսյնացնել նորա կապանքի օղերը, մի նուազ լոյս անցանելով նեղ, վանդակաշէն պատուհանի միջով, ընկաւ այս մարդու երեսի վերայ։

« Ինձ թվումէ, թէ ես ճանաշումեմ քեզ, « Ի՞նչ է քո անունը »։ — Լամոն։

« Արդեօք պատահած չեմ ես քեզ ուր և իցէ »։

— Դէպ ի ֆօնտեներլո ճանապարհի վերայ մի քանի քայլ հեռի Վիմուրից։

« Ուր դու բարձրացրեցիր իմ սրակապը »։

— Եւյն, կոմս, ես առ ժամանակ մի թօղեցի « Կանտէսը այն պատճառով, որ այն տեղից դէպ ի Վենսենեան բանտը փոխադրեմ պարոն Օրնան կալանաւորը ¹⁾ և վերադառնալով այս տեղ պատահեցի ձեզ։

« Բայց դու ինչ կերպով կարողացար ճանաչել ինձ »։

— Ես տեսայ Ձեր պայծառութիւնը . . . հրապարակական տօներում . . . : Երախտապարտ լինելով դէպ ի ձեր առատաձեռնութիւնը, ձեզ այս տեղ բերելուց յետոյ, ինդրեցի ես, որ թոյլ տան ինձ լինել ձեր բանտապետը, և իմ ինդիրը անտես չեղաւ։

« Խեղճ Լամոն, քո պաշտօնը մի նախանձելի գործ չէ . ես ցաւումեմ քո վերայ »։

— Շատուց է արդէն, որ ես բնակլումեմ բանտի պարխազների մէջ. շատուց ծանօթ եմ ես այն մարդերի հետ, որ օրէնքի խստութեամիւքարողված են որպէս զըկված իւրեանց պատուից, արժանաւորութէնից և հարստութենից, բայց երբէք չեմ պատահած այնպիսի մի արգելականի, որ ազդէր իմ մէջ այնքան յարգութիւն դէպ ի իւր անձը, և որի ցաւին այնքան միաշունչ մասնակից լինէին բոլոր նորա բարեկամքը։

1) Սա էր Գաստոնի գաստիարակը, որ բանտարկվել էր կարդինալ Ֆիլելիեօի հրամանով։

«Ուրեմն դեռ ևս ինձ չե՞ն մոռացել»:

—Քաւ լիցիտ. ամենեքեան մտածումն միայն քո վերայ, ամենայն մանրամանութեամբ հարց ու փորձ են առնում այն բաների վերայ, որ պատկանումէին ձեր բանտարգելութեանը. դադարումն փողոցի մէջ, որ մի լուր իմանան ձեր գործի մասին. չեն հասկանում, թէ ի՞նչ կերպով այն բարձր աստիճանից կարողացք դուք ընկնել բանտի մէջ. . . . բայց դուք, կոմ, ի հարկէ անցոյս չեք:

«Պահութիւն Աստուծոյ, ոչ. նախ և յառաջ Գաստոնը բարձի թողի չէ առնելու ինձ. նա աղնիւ է և չէ մոռանալու իւր բարեկամը»:

Բաց ի գորանից այն կինը, որ ձեզ սիրումէ մեծ զօրութիւն ունի:

«Ես, նա ամենայն ինչ կարող է ծանուցանել թագուհուն, իսկ սա իւր կողմից թագաւորին, երբ որ կարդինալը չէր գտանվում երկու ամուսինների մէջ տեղումը»:

—Ձեր պայծառութիւն, ունի՞ք դեռ ևս այսպիսի հզօր բարեկամներ:

«Խիսա շատ, բայց ես հաւատացած եմ, որ նոքա խմումն, պար են զալիս և որս են գնում, նկատելով, որ իւրեանց միջեց պակաս էր մի որսորդ. . . . Եւ յսս ունիմ միայն իմ մօր վերայ. . . Ո՛չ, մայր իմ, մայր իմ. . . . միայն թէ կարողանայի շօշափել իք մի, որ քեզ էր պատկանում. այնուհետև իմ չարչարանքը այնքան խիստ լինելու չէին»:

Իանտապետը հանեց իւր ծոցից մի թուղթ:

—Կոմ, աչա ձեր մօր նամակը:

«Կամակ.» և նա սեղմեց իւր կուրծքին նամակի հետ միասին և այն ձեռքը, որ տալիս էր նամակը:

Լամնը կրակ վառեց և լուսաւորեց կանթեղը, որ կախած էր պատից, յետոյ գնելով զլսարկի վերայ մի թերթ թուղթ, սկսեց մի բան գրել:

Ես միջոցին արգելականը սաստիկ փափագով կարգումէր մի այսպիսի նամակ :

« Ա ալէ կոմսուհին իւր որդուն՝¹⁾.

«Կանտէս, Հոկտեմբերի 17 թուականին:

«Եմ որդի, երգմեցնումն քեզ քո մօր և Աստուծոյ անուշով, որ նայումէ մեր վերայ. զըահաւորվիր հաստատուն հոգով անբաղդութեան մէջ, որ հասել է քեզ: Գու կը փրկվես, ձենրիկոս, և կը փրրկվես շուտով. ամենայն ինչ, որ միայն կարելի է, քո համար գործ կը

¹⁾ Բնադիր նամակի օրինակը:

գրվի. ինդիրք, աղաջանք, ոսկի, հրապարք, ամենայն ինչ, ամենայն... անշնարին է, որ այդպիսի նշնին դատապարտութիւն չը քակտվի ինքն լստ ինքեան, և մի այնպիսի անմեղութիւն, ինչպէս քոն է, չը խոս- տովանվի:

Քո համար աշխատել, այդ իմ մի հատ խորհուրդն է, իմ որդի, որ կապումէ իմ սիրտը այս կեանքի հետ . . . Նոյն խել պատահարի եռ բեկոյից մինչև Սեպտեմբերը, ես այնքան չարչարվեցայ, որ իմ լեզուն երբեք կարողանալու չէ նկարազրել այդ բոլորը. ես չեի հաւատալու, թէ կարելի է տանել այսքան տանջանքի: Քո տառապանքի նկարագիրը անդադար իմ աչքի առաջեւ է, ինձ թվումէ, որպէս թէ մի գե կրծու- մեր իմ սիրտը. ինձ տտելի է այն լիութիւնը, որի մէջ ապրումեմ ես. այն անօթքը, այն զարդարանքը, այն կրակը, այն լոյսը, որից զրկված ես գու. այս բոլորը խոցուումէ իմ աչքը. ես ապրումեմ միմիայն հա- ցով ու ջրով, քնումեմ քարի վերայ, և կրումեմ մաղեղէն հանդերձ... ներիր ինձ, իմ որդի, որ ասումեմ քեզ այս բոլորը. բայց ինձ թվու- մէ թէ քո չարչարանքը թեթևանալու էին այն հաւատով, թէ կայ աշ- խարհի վերայ մի սիրտ, որ զգումէ քո բոլոր վիշտը և մասնակից է քո բոլոր վատաբաղդութեանը. . . :

Ո՛չ, գուցէ գու մտածումես, թէ քո պալատական բարեկամքը մո- ւացել են քեզ. կարելի է բանտի վանդակաշեն պատուհանի միջով թոչում հասանումէր քեզ նոցա ուրախութենների ճայնը. . . Ա հ, եթէ այդ բոլորը ստոյդ է, գու կարող ես գոնէ ասել ինքդ քեզ, թէ այն բարեկամը, որ հաւատարիմ էր, քան թէ քո միւս սյլ բարեկամը- ները, և որ սիրումէր քեզ, ապրումէ այժմ ինչպէս գու, առանձնու- թեան, զրկանքի և չարչարանքի մէջ, և թէ երբ յուսահատութեան ար- տասուքը գլորվումէր քո թշերի վերայով, միւս սյլ այդպիսի արտա- սուք փայլումէր այդ բարեկամի աչքերումը:

Վախաբնամութեան կամքն էր, այսպէս խիստ պատժել քո մայ- րը, այն պարծանքի համար, որ նա պարծենումէր քեղանով, և այն ու- րախութենների համար, որոնց պատճառը գու էիր. . . Բայց չէ պի- տոյ մեղ դժգոհ լինել Աստուծուց: Այս նամակը, որ նա տուեց ինձ կարողութիւն զրելու, և արդէն անտարակոյս թեթևութիւն մեր չար- րանքներին . . . Աստուած թող արժանացնէ ինձ տեսանելու քո աղա- տութիւնը:

Ոինչդեռ Շալէ կոմնը կարդումէր իւր մօր նամակը, որ թրջած էր արտասուքով, բանտապետը գրումէր հետեւեալը:

Վորին Արբազնութեան կարդինալ դը բիշելիեօ սպասաւոր Կամո նի յայտարարութիւնը Հոկտեմբերի 29ից:

« Արբազան Կարդինալի ուղարկած հրամանին համաձայն, ես մի փոքր թեթևացրեցի արգելականի դրութիւնը, որ այս ձանապարհով կարողանայի որսալ նորա հաւատը գէպ ի ինձ. ես տուեցի նորան մօր «Նամակը», որ յառաջուց յանձնած էր Նորին Արբազնութեան հաւանութեանը: Ես այսօր կարգվելով նորա մօտ իրեւ բանտապետ, աշա «թէ ի՞նչ կարող եմ յաւելացնել իմ յառաջուց տուած ծանօթութեն-«ների վերայ: »

« Ես նոյն իսկ արգելականի ըերանից կարողացայ քաղել ամենայն «ինչ: Կա կցորդ է գտամնլած դաւաճանութեանը, նախ և յառաջ լի-«նելով արքայազն Գաստանի և երկու վանդոմների բարեկամ: Երկրորդ, «սաստիկ սիրելով դքսուհի գը Շեվիովը, որ յայտնի թշնամի է Կո-«րին Արբազնութեան, պարոն մինիստրին: »

« Իւր այժմեան դրութեան մէջ նա իւր յոյսը դրել է Նորին արքայա-կան բարձրութեան վերայ, դքսուհու բարեկամութեան վերայ թագաւո-րի մօտ, և առաւելապէս իւր մօրսիրու և հաստատ բնաւորութեան վերայ: »

« Արգելականը, ինչպէս երեւում, բնաւ չէ զդշում իւր գործի վե-«րայ, և միտք չունի փոխել իւր սիրտը և դիտաւորութիւնքը գէպ ի «Նորին Արբազնութիւնը, եթէ ազատութիւն ստանար: Խոստովանու-«թիւնը, որ նա կատարեց, Տէրիք է, նորա մահու դատավճիռը հաս-«տատ ու անփոփոխելի պահելու համար: »

— « Կը Շեվիով դքսուհին սկսել էր հագնվել: Նորա վերայի զգես-տը էր սղիտակ ատլասից: հանգերձի երկայն մէջքը ցուցանումէր կրողի զուգակշիռ իրանը: Կորա մանեակը բաղկանումէր մի շարք խոշոր մար-գարիսներից, մարգարտեայ կապերով հիւսած էին նորա պայծառ շագա-նակագոյն մազերը, որ սանտրած գէպ ի յետ, ոլորած առանձին առան-ձին գանգուրներով, կազմումէին նորա գլխի վերայ մի տեսակ թագ, որի մէջ փայլումէին խոշոր մարգարիտներ: »

Անհկամարդ անգլիացի աղախինը, որ էր դուքս Բուքենհեմի սպա-սաւորներից մինի դուստրը, որին առել էր իւր մօտ դքսուհի գը Շեվ-իովը իւր սպասաւորութեան համար, նայումէր նորա վերայ զարմանա-լով և ցաւելով:

— Ա՛հ, beautiful. Բնչ գեղեցկութիւն և Բնչ վայելչութիւն. Բնչ սպէս կարող էք դուք, ով դքսուհի, միշտ այդպէս գեղեցիկ լինել այն վշտերի մէջ, որ կտրատումէին ձեր սիրտը:

Ի՞նչ պիտոյ է առնել. արտասուքը հետք չէ թողում կնոջ երեսի վերայ. և մեր իսկական արհեստը այն է միայն, որ ամենազարհուրելի հոգեկան վշտերի մէջ կարողանայինք երկել միշտ գեղեցիկ, միշտ նա-

զելի : Այն օրից , որ Արքայական տունը գտանվումէ Նանտէսի մէջ , այն օրից , որ մեք բնակումնք այս քաղաքի մէջ , ուր չարաբաղդ Շալէն մաշվումէ բանտումը , ևս միշտ հրաժարվեցայ մասնակից լինել ուրախութենների , որ իմ աչքին սրբապղծութիւն էին երևում այս տարաբաղդութեան մէջ : Բայց թագուհին համարեա թէ միայն մնալով կարդինալականների կանանց մէջ , կարօտումէ ինձ , և ես չեմ կարող թողուլ նորան միայն . . . :

— Ահա ձեր հովարարը դքսուհի , ձեր վերարկուն :

« Կասուհին վեր կալաւ պյս բաները ուշաբաճութեան մէջ , որպէս թէ ինքը իւրեան ասելով :

— Այսուհետեւ գեղեցիկ լինել , ծիծաղելու նիւթ չը լինելու համար . . . Ո՛չ ծանր , արհամարհելի պարտականութիւն :

Very good! . . . Դուք , դքսուհի , այս հանգերձի մէջ երևումէք առաւել մատաղաշաս :

— Կարելի է : Ինչ ժամանակ ես քսան տարեկան էի , ամենայն կերպ հանդերձը լաւ էր գալիս ինձ , իսկ այժմ ես պիտի քննելով ընտրեմ իմ համար հանդերձ և զարդ . . . :

Բայց դուք , դքսուհի , և այժմ ևս սիրելի էք , ինչպէս յառաջ իսկ մեր երջանիկ Անգլիայումը , սէրն է գեղեցիկութեան շափը :

— Այսուհետեւ այս հաւասարի եմ , ինձ դեռ ևս շատ սիրումն , բայց այդ , ձիրք չէր :

« Այս հայրէք , դքսուհի , նայեցէք , թէ ի՞նչքան կենդանութիւն կայ ձեր աչքերումը , որոնք դեռ այս բոպէիս այնքան շատ արտասուեցին . . . :

— Այսուհետեւ իմ աչքերը չոր են , բայց նա , որ ինձ սիրելով մասնակից էր եղած այն յիմար դաւաճանութեանը , մաշվումէ այժմ կապանքի մէջ . . . այլև եթէ սէրը լիներ այնպէս , ինչպէս նա կարծումէ . . . բայց ոչ , ես երբէք չեմ սիրած նորան այնպիսի սիրով , որին արժանի էր նա . իմ սէրը նորա հետ զրկված էր այն երկնային կայծից , որ փոխարկումէ նորան գէպի ի մի հրեղէն հոսանք . . . երբ որ ես հրաժարվեցայ բուքենչեմից , որ իւր վերայ էր գարձուցել թագուհու աչքերը , երբ որ ունեցայ այն սարսափելի անձնուրացութիւնը բաց թողուլ այն մարդը , որին սիրումէի . ես հարկադրվեցայ այս զոհի վերայ յաւելացնել մի նոր զոհ , և սկսանել մի նոր հաղորդակցութիւն , որ Աւստրիական Աննայն հանգիստ մնար բոլորովին և իւր յաղթութեան մէջ . ես կատարեցի այս . . . բայց զոհը պատահեց սարսափելի . . . :

« Այսուհետեւ այդ վեր էր , քան թէ ձեր ոյժը , և այն օրից դուք բոլորովին փոխափեցաք . համարձակութիւն էր արդեօք ասել ձեզ , դքսու-

Հի, թէ բարեպաշտութիւնը, որով դուք յառաջ նշանաւոր էիք, չեռացել է ձեզանից . . . :

Ո՞չ. Ես իւեցի ինձանից այն բաղդաւորութիւնը, որ Աստուծուց էր ուղարկած. Ես կապված էի մի այնպիսի մարդու հետ, որի նմանը չը կայ աշխարհում, և ինքս իմ ձեռքով կտրեցի այն կապերը, որ միաւորումէին ինձ նորա հետ, թող աւլով նորան ուրիշ կնոջ. Ես ինքս եղայ այն գժոխային զօրութիւնը, որ կտրատումէ սիրտը և թունաւորումէ ամբողջ կեանքը :

«Եւ դուք մինչեւ այժմ ևս սիրումէք մեր փառաւոր Լորդը :

— Այո՛, ես սիրումեմ նորան . . . լինումն ըստէներ, որ ես պատրաստ էի ընկնել նորա ոտքերը: Սիրելի լինել բուքենհեմին, սիրելի այն մարդուն, որի ճակատումը փայլումն երեք թագաւորութենների մեծութիւնք. այդպիսի բաղդ, որին արժանի չէ ոչ մի հասարակ կին. . . Ա՛յ, ես էի այն կինը, որին բաղդը սահմանել էր այս երջանկութիւնը, և այդ մարդը ասումէր ինձ, թէ սիրումէ ինձ. . . Նա, Բուքենհեմը սիրումէր ինձ. . . Ա՛յ, Աստուծած :

«Եւ դուք կարողացաք այդպիս շուտով հրաժարվել նորանից :

— Այո՛. պատճառ, ես լաւ համարեցի ենթարկել այն նախանձաւորութեան տանջանքներին իմ անձը, քան թէ թագուհին. . . Ես սիրելի էի բուքենհեմին, բայց դորանից յառաջ սիրելի ու բարեկար էի Աւստրիական Անային: Ես կամնումեմ մեռանել, կրելով այդ անունը. այս կամքը զօրաւոր է իմ մէջ, և աւելի զօրաւոր, քան թէ սէրը: Բարձր աստիճան և իշխանութիւն անպատճառ հարկաւոր են ինձ. Ես չեմ կարող ապրել առանց նոցա, և նոքա կապելով ինձ աշխարհի հետ, շնուրմն իմ սէրը սարուկ :

Ո՞ի զարհուրելի դիպուածով ժառանգեցի ես մի և նոյն ժամանակին հարստութիւնը և կոչումը գ՝ Անքը Մարշալի կնոջ, այն կնոջ, որ այրվեցաւ Գրեվեան հրապարակի մէջ նորա համար, որ արժանացել իւր թագուհու «սիրականի» անունին: Այն ժանգագին բաները, այն ոսկի շղթայքը, այն ապարանջանքը, որ բոլորը պատկանումէին Գալիգէ Կոնչենուն, կրումեր նա, և կարելի է թէ սիրումը նորանց: Այն վենետիկեան գնդասեղը, որի մէջ ասումն, թէ թօյն էր պաշում, այն մատանին, որի համար ասումն, թէ կախարդը ընծայել է նորան գիշերով եկեղեցու բակումը, այն բոլոր բաները դիպել են այդ կնոջը, որ գուցէ թէ կապակից լինելով նդոված էակների հետ, այլև մասնակից լինելով սրբապիշտ արուեստների գաղանիքին, ուսել էր շըղթայել միշտ իւր հետ Մարիա Մեգիչսի սիրտը: Եւ այս բոլոր գանձերը այժմ պատկանումն ինձ. նոքա իւրեանց մէջ պաշել են այն թոյնը

որով նա ապականել էր այդ գանձերը. նոքա այդ թոյնը խառնումն իմ արիւնի մէջ, այրումն, լափումն նորան. և այս երկու զարհուրեցի ախտերը, սէրը և պատուասիրութիւնը սպանումն ինձանում բոլոր միւս զգացողութիւնքը . . . Ո՛չ, Աստուած իմ, Աստուած. ինչն թոյլ տուեցիր այդ գևերին տիրել ողօրմելի կնող սրտին . . . :

— Դաքուհի, ութ ժամը զարկումէ, ձեզ ժամանակ է :

« Այս ժամանակ է. մեք պար ենք զալիս այս երեկոյ. մեք, կարելի է ասել, պիտոյ է կաքաւենք Շալէի պատժվելու օրին. պատճառ, արիւնը հետք չէ թողում այր մարդերի ձեռքերի վերայ, ինչպէս արտասուքը կին մարդերի վերայ . . . ինձ ժամանակ է :

Դաքուհին, այս խօսքերը ասած, ընկաւ աթոռի վերայ գունաթափ և վաստակած չարչարանքներից :

Այս բոպէին ներս բերեցին մի սպասաւոր, պալատական հանդերձով, որ յանձնեց դքսուհուն մի ծրար թագաւորական կնքով և հեռացաւ :

Լուդովիկոսը զրումէր դքսուհի գը Շեվրէողին, թէ Շալէն կարող է գտանել ողորմութիւն և մի պայմանով, որ դքսուհին կատարելու էր. « որին մեծութիւնը ինքը կամենումէր յայտնել դքսուհուն այդ պայմանը միւս օրի առաւօտու ինն ժամուն, երբ որ կը տեսաներ նորան:

Վայենտինան կարդալով այս նամակը ծնկի վերայ, շատ արտասուք թափից :

— Աստուած իմ, զոհ եմ քեղանից. Շալէն կը փրկվե :

Օ.

ԹԱԳԱԽՈՐԻ ԱԲԱՆՉԵՆԱՄԱՆԲ :

1626 Թագականի Հոկտեմբերի 28 ի առաւօտուն Կանտէսեան բանտի շենութեան վերայ նստել էր թանձր և խաւար մառախուղ :

Մի քանի անցաւորք միայն երեսումէին այս համարեա թէ անբնակտեղումը, և այս մարդերի մէջ որպէս ստուեր երեսումէր մի բարձրահասակ կերպարանք, երկայն վերարկուով և սե դիմակով երեսի վերայ. այս ստուերատեսակ կերպարանքը նկատելի անհանդստութեամբ. ման էր գալիս հին բանտի պատշգամի չորս կողմով :

Դը Շեվրէող դքսուհին, սկսեալ այն օրից, երբ պալատի հետ միասն եկել էր Կանտէս, ուր Շալէ կոմը արդէն աւելի քան թէ մի ամիս մաշվումէր բանտի մէջ, չէր ունեցել այնքան վատահութիւն, որ մօտենար այս սարսափելի բնակարանին: Միանդաւ միայն, թագուհու կառքի մէջ անցանելով բովելեան հրապարակի վերայից, տեսաւ նա

Հեռողից նեղ փողոցի ծայրումը այս զարհուրելի շինուածը, և նորա սիրալ այնպէս սեղմլեցաւ նորա կրծքումը, որ փոքր մնաց, որ կորուսանէր իւր զգայութիւնքը . . . Բայց այժմ ամենայն ինչ փոխած էր. այժմ նա հաստատ դիտէր, որ Շալէն պիտի փրկվի. պատճառ, իւր հոգու մէջ ուխտ էր զրել — կատարել այն պայմանը, որ պահանջնելու էին նորանից, թէև շատ ծանր և դժուար լինէր այն :

Այս երդումը տուած, սպասումէր նա ինն ժամին, որ սահմանած միջոցն էր թագաւորը տեսանելու, և շտապեց նայել այն պատերի վերայ, որ մի փոքր յառաջ բերել էին նորա վերայ այնպիսի զարհուրանք: Զգելով իւր փառաւոր հանդերձների վերայ մի մոխրագոյն վերարկու և գնելով երեսին մի ուե դիմակ, թողեց նա իւր ուղեկիցքը հրապարակի վերայ և մօտեցաւ այն օժևանին, ուր արդելված էր անբաղդ երիտասարդը:

Մնտարակոյս, շատ փոքր յուսալի էր կարողանալ մօտենալ բանտարկածին, և ծանուցանել նորան, թէ նա ազատվելու է. բայց նա կարող էր գոնէ մերձնալ այն պատերին, որոնց ներսումը մաշվումէր կոմսը. կարող էր շնչել այն օդը, որ շնչումէր կոմսը. ուր բաց ի սորանից երբեմն պատահումն դիպուածներ, որ չէ կարելի յառաջուց դուշակել . . . Գուցէ կը յաջողի նորան մի բան իմանալ անբաղդի մասին:

Արդէն կէս ժամ անցաւ, մինչ դքսուհին շրջշջումէ այս մայլու պատերի մօտ, չը կարողանալով հեռանալ նոցանից. յառաջ տանելով իւր հետաքննութիւնը, հասաւ նա վերջապէս մի նեղ փողոցի, բանտի դոների մինի մօտ, որի հանդէպ կար պանդոկ: Մի բարձրահասակ, նուալ գունաժամակ մարդ գուրս եկաւ այն տեղից :

Դա բանտապետներից մինն էր, և յատկապէս նա, որ պահումէր կոմս Շալէին: Երեսումէր, թէ նա պանդոկումը թողել էր իւր բարեկամքը, որոնք աղաչումէին նորան այդպէս շուտով չը հրաժարվիլ իւրեանցից. այսպէս կարելի էր եղափակել այն բանից, որ նա կանգնելով դեռ ևս կիսափակ դրան շեմքի վերայ, ասաց :

— Ո՞ւ՞ ո՞ւ՞ պիտոյ է ինձ վերադանալ դէպ ի իմ պաշտօնը :

Դը Շեվեռօղ դքսուհին, լսելով այս խօսքերը, յանկարծ հոգի ստացաւ և յարձակվեցաւ դէպ ի այն գուռը, որի միջով պիտի ներս մտանէր բանտապետը :

— Կացէք. ձայն տուեց նա, բան ունիմ խօսելու ձեր հետ. թէ Աստուած կը սիրէք, լսեցէք ինձ . . .

Ի՞նչ հարկաւոր է քեզ, իմ նազելի, ես պատրաստ եմ լսելու քեզ, տիկին . . .

Ի՞նչ հարկաւոր է քեզ, իմ նազելի, ես պատրաստ եմ լսելու քեզ,

այն պատճառով, որ բանտապետը դքսուհու շարժողութեան միջոցին նկատեց հասարակ վերարկուի տակ մի փառաւոր զգեստաւորութիւն, որ կարող էր պատկանել երևելի տիկնոջ միայն :

«Ես միջոցին դքսուհին ստանալով բանտապետի կամքը՝ լսել նորա ասելիքը, չը գիտէր, թէ ինչ խօսէ. դքսուհին տեսանելով բանտապետը, ժամանակ չը գտաւ մտածելու առաջին բովելումը, թէ ի՞նչ օգուտ կարող է յառաջանալ այս դիպուածից և դադարեցրեց նորան, չը գիտելով ամենեին, թէ ինչն համար .

Բանտապետը, ասելով, բայց պատասխան չը ստանալով, կամենումէր հեռանալ: Դքսուհին հանեց իւր մատից բովիանտի մատանին և տուեց բանտապետին, որ մնայ մի փոքր ևս, և ասաց.

— Դուք գնումեք կոմն Շալէի մօտ:

«Եսոյ, տիրուհի. ի՞նչ բանով կարող էի օգտակար լինել ձեզ:

— Ես կամիմ... Ա՛չ... Թոյլ տուեցեք ինձ... ձեր ներկայութեամբ տեսանել նորան մի բովեւ... պահանջնեցէք դորա փոխարէն ինչ վարձ և կամիք :

«Եյդ անկարելի է :

— Ուրեմն հասուցէք նորան գո՞նէ մի նամակ

«Իմ պահպանութեան յանձնված բանտարկեալը չէ կարող նամակ ընդունել:

— Ուրեմն ասացէք նորան

«Ես ոչինչ չեմ կարող ասել նորան :

— Ե՛ս, Աստուած իմ, Աստուած իմ :

Եւ յուսահատութեան մէջ դքսուհին չը գիտէր, թէ ինչ առնէ և ինչ որոշէ . . . Յանկարձ մի գեղեցիկ խորհուրդ վեր փայլեցաւ նորա մտքումը, նա վեր կալաւ մի ծաղկափունջ երեք վարդից կապած, որ դըրած էր նորա գոգումը և ասաց բանտապետին, տալով նորան իւր բոլոր ոսկին, որքան ունէր իւր մօտ :

— Գո՞նէ գուրե մի հրաժարվիք տալ Շալէին այս ծաղկիները, սոցա մէջ մի վտանգաւոր բան չը կայ

Դքսուհին կարծումէր, որ Շալէն, ստանալով այս ծաղկափունջը կը հասկանայ, թէ ով էր նորա ուղարկողը, և կ'ընդունէ որպէս մի բարի գուշակութիւն :

Բանտապետը, տեսանելով այսպիսի գեղեցիկ տիկին, որ յանձնուած մէր նորան այդ ծաղկափունջը, զգաց, որ անարժան էր ձեռքով մօտենալ նորան. նա պատառեց իւր ծոյնի մէջ դտանված տեսրակից մի թերթ թուղթ, պատառեց նորա մէջ ծաղկի ծղոտները և խոստացաւ հասուցանել նորանց բանտարկած կոմին:

— Այնձահօգի եղիք, ասաց դքսուհին այն բանտապետ մարդուն, և թողեցէք ինձ մի քանի բառ կապարեայ գրչով գրել այդ թղթի վերայ:

Զայնը, որով ասլից ցան այս խօսքերը, հնչեց մի այնպիսի քաղցր զմայլեցուցիչ կերպով, որ բանտապետը ըստ կարողացաւ ընդդիմանալ. Դա տուեց դքսուհուն գրիչ և թանաքաման, Վալենտինան, սիրաը լրցված ուրախութեամբ, և յիշելով այն խօսքերը, որ Շալէն ասել էր նորան Լիմուրեան անցքից յառաջ, գրեց շտապով. «Երբ կ'անցանեն այնքան ժամեր, որքան վարդեր կային այս ծաղկակնջի մէջ, դու կը աղատվիս քո թշնամու ձեռքից :

Այս գործը կատարած, դքսուհին հրաժարվեցաւ բանտապետից և շտապեց գեպի իւր պատգարակը. երանելի յուսով, թէ Շալէն շուտով կը ստանայ նորա ծաղկիները և կը միմիթարվի, ճանաչելով այն ձեռքը, որ գրել էր այս նամակը:

Լուդովիկոս ԺԳը բնակումէր այն միջոցին Կանտէսեան ապարանաքումը, որ շինել էին Բրիտաննեան դուքսերը : Լայնարձակ սենեակները այն բաժնի, որի մէջ նա բնակումէր, չունելով արքայական պահապարդութիւն, նշանաւոր էին իւրեանց մոայլ կերպարանքով և լուրթենով, որ թագաւորումէր այն տեղ :

Կախասենեկումը, ուր արդէն անցանումէր մառախլապատ և ցուրտ առաւօտու նուազ լցումը, կային երկու մեծ պատուհաններ, զանազան գունաւոր ապակիներով. այս պատուհանների միջոցում եղած պատի մօտ գրած էր մի մեծ ընկուզեայ պահարան, որի մօտ նստել էր մի սպասաւոր և ձեռքերը խաչած կրծքի վերայ, սաստիկ յօրանջումէր : Նորա հանդէպ մի ընկուզի փայտի պատուանդանի վերայ կանգնած էր մի կերպարանք, որ այս և այն կողմը շըջումէր գլուխը և թարթում էր աչքերը. որպէս թէ ծաղը առնելով սպասաւորին, յօրանջումէր և ինքը

Հետեւեալ սենեակը, թագաւորի առանձնարանը նոյնպէս տիսուր էր և մոայլու, ինչպէս նախասենեակը: Պատերի վերայ կախած էին զէնքեր, քարտեղներ, շատ պատկերներ. խաչելութիւն, նուազարան, որսորդական եղջեւը և վերջապէս աբեղայական վերարկու, որ թագաւորը սիրումէր երբեմն ձգել իւր վերայ: Մեծ հնոցումը կրակը վառվումէր. լայց նա բացարձակումէր միայն մի թոյլ լցու և չէր ջերմացնում սենեակները, որոնց մէջ փչումէր գերեզմանական սառնութիւն :

Լուդովիկոսի բոլորովին սև հանգերձքը տալիս էին նորան սուզի և տիրութեան կերպարանք: Թագաւորը շատ թոյլ առողջութենով և

կաղմուածքով, գունաթափած էր և մտատանջ. Կանստել էր ցած թողած իւր ցանցառ մաղերով ծածկած գլուխը թոյլ և անզօր ձեռքերի վերայ, և անշարժ նայումէր մի բանի վերայ, որ կար նորա առաջն:

Ո՞ւծ սեղանի վերայ, ուր ընկած էին աղօթարաններ, օրչնարաններ, մեռելի գանգ, դրած էր նոյնպէս մի փոքրիկ արկղ փիլի ոսկրից, ոսկի շէնքով, զարդարած շատ գեղեցիկ և ինկաւորած զանազան անուշահոտ ջրերով, սա ոչինչ յարմարութիւն չունէր շրջակայ առարկաների հետ:

Այս արկղեկը լցած մանր տոմսակներով, մի քանիքը ևս ընկած էին սեղանի վերայ, գտել էին Շալէ կոմի մօտ, նորա բոնվելու բոպէին և Ռիշելինի հրամանով մատուցած էին թագաւորին. աչա այս արկղի վերայ էին բնեռած Լուդովիկոսի աչքերը այնպէս անշարժ կերպով:

Նորա ձեռքը խանճելով տոմսակները, բարկութեամի սեղմումէր նորանց: Այս տոմսակները զրած էր դը Շեվրեօվ դքսուհին դէպի Շալէ կոմիը, այս երկուքի երջանիկ սիրու կարձատե միջոցումը:

— Եսո՞ւ, ասաց թագաւորը, նայելով չորս կողմը, — այս նամակները ասումն Ճշմարիտը . . . Աչա այն նուագարանը, որի համար ինձ բամբասումն և որով ես փարատումն իմ տիրութիւնը, որ կը ծումէր իմ սիրտը . . . Աչա այն արելայական վերարկուն, որ ես հագուստում երեմի .

— Եսո՞ւ, դքսուհի, այս ևս Ճշմարիտ է. դուք չը գիտեք, որ ես պատատված այս վերարկուի մէջ ալիող զիշելներ անցուցել եմ ծնկի վերայ, Աստուծոյ սեղանի առաջն, և թէ այդ բոպէներում միայն եղել եմ կատարելապէս երջանիկ . . . երբ ես սաղմոս էի երգում, ինձ թը վումէր, թէ միշտ կրումէի այս վերարկուն: Այն ժամանակ ես մոռանումէի բոլորը. մի կատարեալ հանգարտութիւն թագաւորումէր իմ շրջակայքաւմը. ես այն ժամանակ թշնամիք չունէի, չունէի եղայր, որ սպասումէր իմ մահին, որ տիրէր իմ զահին և իմ կնոջը. չը կար այն մինիստրը, որ խոնարհեցներ ինձ իւր կարողութենով, չը կար այն ժողովուրդը, որ երեսիս էր զարկում իւր կատականքը և ծաղը . . . ես մոռանումէի, և այս է այն յանցանքը, որի համար գատապարտումն ինձ . . . Աստուած, Աստուած, ինչու համար ցանկանումն դոքա, որ ևս առաւել անբաղդ լինիմ ես, ինչու համար յանդիմանումն ինձ այն կարք բոպէների համար, որ ուրախութիւն էին բերում ինձ . . .

Եւ սաւն արտասուքը, որ Լուդովիկոսը ի զուր աշխատումէր զսպել, զլորվեցաւ նորա աչքերից: Նա սարսափելով շտապեց սրբել նորան . . .

— Ո՞չ, ձայն արձակեց նա եթէ նոքա տեսանէին այս արտասուքը, այնուհետեւ դարձեալ կ' անուպնէին ինձ թոյլ . . . թոյլ . . . Միթէ ես

թոյլ էի պատերազմի դաշտումը, ուր Քաստոմիկեր ծերունին խօսելով իմ վերայ, ասաց «Ես երբէք տեսած չեմ այսպիսի քաջ կտրի՛՛: Մի՛թէ ես վախեցայ մահից . . .»

Ի՞այց ինձ բամբասումնն, իմ վերայ ծիծազումնն այն պատճառով, որ ինձ ոչ ոք չէ սիրում . . . Ո՞րքան թշնամիք, որքան մատնիչք, որոնց բարերարութիւն էի արած, շղջապատումնն ինձ . . . ինչքան վիշտեր ամենայն կողմից թափումնն նորա իմ վերայ, և ես ձեռքումս ունելով պատճելու հնարքներ, պիտոյ է բոնակալ համարվիմ, եթէ գործ դնէի դորանց . . . Ա՛յ Աստուած, Աստուած . . . Համարձակվել ոչ սիրել, ոչ ատել . . . այս մի զարհուրելի բան է . . . այսպիսի կեանքը մահից վատթար է . . . ինն ժամն զարկեց. պատուհանի տակ լսվեցաւ մի կառքի դը դրդիւն. եկաւորը գը Շեվլեօլ դքսուհին էր: Թագաւորը ուղղվեցաւ աշխատելով, որքան կարելի է առաւել հաստատութիւն տալիւրեան. ի վերայ այդք ամենայնի մի երկչոսութիւնն եկաւ նորա վերայ այս կինը տեսանելու ժամանակ. այս կինը, որին կարող էր նա ընդունել որպէս թագաւոր և որպէս դատաւոր:

Ի՞այց դքսուհին, կոխելով արքայական շեմքը, ինքը ևս լցված էր աշով ու երկիւղով. նորա հոգու սովորական հաստատութիւնը մօտ էր աշա հրաժարվել նորանից. առաւօտեան այցելութենից յետոյ, որ արել էր բանտի շրջակայքումը, վերադառնալով գեպի տուն, տիրած էր, նկատելով այն գունաթափութիւնը և ուշաթափութիւնը որ երեսումէին նորա երեսի վերայ, նա հաղիւ թէ դատաւ այնքան միջոց, որ մինչև թագաւորին տեսանելու սահմանած ժամանակը, կարողանար ուղղել իւր սարք ու կարգը:

«Յա կամնումէր գեղեցիկ երկիւ թագաւորին այն խորհրդով, որ իւր գեղեցկութիւնը կարողանայ միջնորդ լինել Լուդվիկոսի բարկութիւնը շիջուցանելու և մեղմելու համար, բայց դքսուհին շատ տհաճ էր այն բանի վերայ, որ իւր սրտի խառնակութիւնը և իւր մարմինի վաստակածութիւնը զրկումէին նորա գեղեցկութիւնը իւր սովորական փայլողութենից:

Սոքա էին նորա պատճառը, որ նա աչ ու գողով մօտեցաւ Լուդվիկոսի ժամանակում այնպիսի մարդու, որ ինքն Աստուած միւս մարդերից աւելի վերադաս էր արել: Գլքսուհին ծունդ կրկնեց. թագաւորը սառն նայելով նորա վերայ, նշանացի արեց, որ նստի շատկապէս նորա համար պատրաստած աթոսի վերայ :

— «Կըսուհի, ասաց թագաւորը, յառաջ քան թէ կարող էի իմ ցանենիութիւնը ձեղ յայտնել, հարկաւոր եմ համարում ես Ֆիշդ սահմանել մեր յարակցութիւնը միմանց չետ: Երբ գուք դեռ ևս շատ

մատաղահաս էիք, ես ձեզ կին չը ընտրեցի Կոնետաբլ դը Շեմին, որին ճանաչեց Գրանսիան ինձանից յետոյ իւրեան տէր: Ձեզ չը թողեցի ես նորա մահից յետոյ նորա բոլոր պատիւ ու անունը, բոլոր հարստութիւնքը, որոնց վերայ ունեիք դուք միայն այն իրաւունքները, որ ինձ հաջոյ եղաւ մի առանձին շնորհով պարզեց ձեզ: Յետոյ դարձեալ չամուսնացուցի՝ ես ձեզ դուքս Շելքոնօղի հետ, Գրանսիայի ոլերի և դուքս Գիլի եղարօ հետ:

»Ամենեին այդպէս, թագաւոր»:

—Այս բոլորը միթէ բաւական ապացոյց չէր, որ ես առաւել սիրումէի ձեզ, քան թէ նոքա, որ թափումէին ձեր առաջն կեղծաւոր խօսքեր և գոլասանութիւն, ոչինչ բան չը գործելով ձեր համար: Արդեօք այս մինը ապացոյց չէր իմ դէպի ձեզ քնքրուշ ձգտողութեանը, որ ոչինչ փոխարէն չէր պահանջում ձեզանից և պահումէր այն պարակեցութիւնը, որ թոյլ էր տալիս նորան թափել ձեր վերայ ամենայն տեսակ բարութիւնք առանց արատաւորելու ձեր պատիւը:

Ո՞չ թագաւոր... այդ բոլորը ճշնարիտ է, ես զգումնամ ձեր բուլը շնորհները...»

—Ահա, թէ ես ինչպէս եմ եղած դէպի ի ձեզ և դուք ինչպէս փոխարինած էք ինձ:

Թագաւորը տուեց նորան արկողի մէջ գտանված նամակներից մինը:

—Լարդացէք, զքսուհի, այնպէս, որ ես ևս լսէի. Ես պարզ սրտով ասացի ձեզ, թէ ինչպէս էին իմ սրտի բերմունքը դէպի ի ձեզ, այժմ ձեր կարգն է նոյն օրինակին հետևել:

Դքսուհին հարկաւորված էր ձայնով կարգալ այն վշտացուցիչ խօսքերը և գարձուածները, որ գրել էր ինքը այն մարդու համար, որ այժմ նստած էր նորա առաջն և լրութեամբ ականջ էր դնում նորան: Խւրաքանչիւր արտաբերած բառ այնպիսի չարչարանքի գին էին, որ ասես թէ կարմրացրած երկաթով մի կտոր կեղեցումէին նորա սրտից: Սառն քրտինքը, դուրս երևելով նորա ճակատի վերայ, խառնվումէր արտասուքի հետ, որ թափումէր աչքերից, և երբ որ այս տանջանքը աւարտեցաւ, զքսուհին չարչարված, թուլացած ընկաւ թագաւորի ոտքերը, մի խուլ հեծեծանք արձակելով:

—Այս, ասաց զքսուհին. այս բոլորը չափից ու սահմանից դուրս զարշուրելի է... բայց Շալէն յանցաւոր չէ այս անարժան նամակների մէջ. նա երբէք չէ արտաբերել և մի վշտացուցիչ բառ Չեր մեծութեան վերայ: «Ա յանցաւոր չէ, թագաւոր, և նորա համար եկել եմ ես աղաչել ձեզ... Դուք այնքան ողորմած էք...»:

«Ողորմած. բայց դուք, հաւաքված ձեր խելօքների հետ, վճռել

Էկը թէ ֆրանսիական թագաւորը անգութ է:

— Ա՛չ թագաւոր, ներեցէք, խնայեցէք . . .

« Խնայել մի՛թէ դուք խնայել էք ինձ . . .

Իսյց դուք տեսանելով ինձ գունաթափ, չարչարված, չէկը դադարում հալածել ինձ ձեր դառն կատականքներով: Ես վաղուց ահա հրաժարված եմ իմ կոչմանը արժանաւոր փայլուն և փառաւոր չամպերձներից և կրումն նոցա փոխանակ մշտնջենաւոր թխարդեստութիւն: Այս կնճիռները, որ ծածկել են իմ երեսը, այս տկարութիւնքը, այս բոլոր ցոյց են տալիս ձեզ մի մարդ, որ վաղուց ահա և տարաժամ դատապատված էր դէպ ի գերեզման, բայց դոքա չը կապեցին ձեր ձեռքը հալածելուց ինձ կատականքներով, զբարտութեամին, ձեր շարութեան անվերջանալի թունովը:

— Թագաւոր, խնայեցէք, ես մեռանումեմ ձեր ոտքումը . . .

Դքսուհին արգարեւ այնպէս գունաթափած էր, որ թագաւորը վեր բարձրացրեց նորան և նստեցրեց աթոփի վերայ:

« Այժմ մնումէ ինձ աղաչել Ձեր մեծութիւնը Աստուծոյ անունով միայն» ասաց դքսուհին քաջալերված ձայնով . . . :

— Այդպէս ես արժան էր ձեզ, պատճոռ, ես պիտոյ է ներգործեմ ոչ իրեւ թագաւոր, այլ որպէս քրիստոնեայ, և ոչ մարդերի համար, այլ Աստուծոյ: Ձեր հաղորդակցութիւնը կոմս Շալէի հետ, յայսնի է ամբողջ պալատին: Յօժարեցէք հրանանալ նորան և շեռանալ նորա հետ միասին ֆրանսիայից: այս պայմանով կը ներեմ ես նորա անհաւատարմութեանը և ձեր ապերախտութեանը . . . :

Դքսուհին լսելով այս խօսքերը, չը կարողացաւ վճռել, թէ հնար էր կատարել թագաւորի պահանջողութիւնը. նա չը կարողացաւ ոչինչ պատասխան տալ. թվումքը, թէ խելքը թռել է զլիիցը և որպէս թէ սիրալ քարացել է նորա կուրծքի մջի:

Այնուհետև Լուգովիկոսը ասաց նորան, թէ Շալէի գործը կարող է վերջանալ միայն մաշու պատճով, և եմէ դքսուհին հաւան էր այն կարճ միջոցին, որ տեսելու էր մինչև դատավճոի կատարվելը, ստորագրել ամուսնութեան պայմանագրութիւնը զլիսապարտված Շալէի հետ, այնուհետև գտանելու է նա թագաւորի շնորհը:

Այս բոլոր բաների վերայ թագաւորը յաւելացրեց. թէ դքսուհին մտածելու համար ունի միայն երկու օր ժամանակ, բայց դքսուհին այնպէս թուլացած լինելով, որ կարող չէր պատասխանել, հրամայեց թագաւորը, որ առաջնորդէն նորան մինչև նորա կառքը:

Ղամնը զարմացած այսպիսի արագ փոխակերպութեան վերայ, աշխատեց տալ իւր արգելականին, որքան կարելի էր քաջալերութիւն և ասաց :

— Այս տեղ, մօտիկ մի սանդուղք կայ, որ ամսցի թողած է վաղուց այդ սանդուղքի վերայով կարելի է ելանել գեպ ի բանտի բուրգի վերին պատշգամը, առանց պահապանների իմանալուն . . . կամք, որ ես տանեմ ձեղ այն տեղ :

Դուք կը տեսանեք բաղմութիւնը, որ պալատից երթալու է բենեղիկառոսի եկեղեցին, ուր պիտոյ է կատարիլ Նորին Բարձրութեան պատկի խորհուրդը գեղեցիկ Մօնպանսիէ օրիորդի հետ :

Մի քանի րոպէից յետոյ Շալէ կոմը և նորա ընկերը արդէն գտանվումէն բուրգի գլխումը նորա մի նեղ պատուհանի մօտ: Կոմը փոքր ինչ յառաջ այնքան գեղեցիկ, այնքան երիտասարդ լինելով, այժմ կանդնած էր այնտեղ գունաթափ և խորշումներով ծածկած երեսով: . . . Նայումէր այն ճախ բաղմութեան վերայ, նայումէր պալատի վերայ, որին մի փոքր յառաջ պատկանումէր և ինքը, և որ այժմ անցանումէր այնպէս ուրախ, այնպէս անչոգ նորա գերեզմանի մօտից :

Յանկարծ բարձր աղայակներ լսվեցան արմոխից, որ ծածկել էր հրապարակը և փողոցը: Ժողովուրդը տեսաւ Արքայազն Գաստոնը, որ այսօր հասարակաց հարցասիրութեան նիւթ էր և ուրախ արարողութեան հանդիսացոյց: Տեսանելով այս մարդը, որ մողոքցուցել էր Շալէ կոմին գեպ ի պատուամբութիւն, որ ձգել էր նորան բանտի մէջ, որ բոլոր ցաւերի գումարը հաւաքելով նորա գլխի վերայ, թողած էր նորան էշափօտի պատուանդանումը: մի սարսուռ տիրեց անբաղդ երետասարդին: Նորա աչքերը փակվեցան և բանտափեալ տարաւ նորան համարեա թէ անզգայ, դարձեալ գեպ ի բանտ:

Շալէի ուշը վերայ գալով, փոքր առ փոքր հանդարտեց նա և սան աչքով սկսեց սպասել մահին, որ արդէն գուշակումէր ինքը:

Իսյց այսու ամենայնիւ նա միշտ դարձուցանումէր իւր աչքերը գեպ ի այն երեք վարդերը, որոնց թառամած թերթերը սկսել էին արդէն թափվել գետնի վերայ:

Գաստոնի անհաւատարմութիւնը տեսանելով, յոյս ուներ նա գեռ ևս իւր սիրականի օդնութեան վերայ, և հաւաստի էր որ Ալենտինան բարձի թողի առնելու չէ նորան:

Այս միջոցին, երբ նա այս բաների վերայ մտածելով կարծումէր իւր անձը արգելանքից աղատված, աչա եկան ասելու նորան, թէ ժողոված գատաստանը հրաւիրումէ կունին երևել իւր առաջն: Պատրաստված լինելով գեպ ի այս սարսափելի րոպէն և հոգի ստանալով իւր աղ-

Ղամինը զարմացած այսպիսի արագ լիովակերպութեան վերայ, աշխատեց տալ իւր արգելականին, որքան կարելի էր քաջալերութիւն և ասաց :

— Այս տեղ, մօտիկ մի սանդուղք կայ, որ ամայի թողած է վաղուց. այդ սանդուղքի վերայով կարելի է ելանել գետի բանտի բուրդի վերին պատշգամը, առանց պահապանների իմանալուն . . . կամիք, որ ես տանեմ ձեղ այն տեղ :

Դառք կը տեսանէք բաղմութիւնը, որ պալատից երթալու է Բենեդիկտոսի եկեղեցին, ուր պիտոյ է կատարվի Նորին Բարձրութեան պսակի խորհուրդը գեղեցիկ Մօնականսիկ օրիորդի հետ :

Ո՞հ քանի բոպէից յետոյ Շալէ կոմսը և նորա ընկերը արդէն գտանվումն բուրդի գլխումը նորա մի նեղ պատուհանի մօտ: Կոմսը փոքր ինչ յառաջ այնքան գեղեցիկ, այնքան երիտասարդ լինելով, այժմ կանգնած էր այնտեղ գունաթափ և խորշոմներով ծածկած երեսով . . . նայումէր այն ճոխ բաղմութեան վերայ, նայումէր պալատի վերայ, որին մի փոքր յառաջ պատկանումէր և ինքը, և որ այժմ անցանումէր այնպէս ուրախ, այնպէս անհոգ նորա գերեզմանի մօտից :

Հանկարծ բարձր աղաղակներ լսվեցան ամբոփից, որ ծածկել էր հրապարակը և փողոցը: Ժողովուրդը տեսաւ Արքայազն Գաստոնը, որ այսօր հասարակաց հարցափրութեան նիւթ էր և ուրախ արարողութեան հանդիսացոյց: Տեսանելով այս մարդը, որ մոլորեցուցել էր Շալէ կոմսին գետի ապստամբութիւն, որ ձգել էր նորան բանտի մէջ, որ բոլոր ցաւերի գումարը հաւաքելով նորա գլխի վերայ, թողած էր նորան էշափօտի պատուանդանումը: մի սարսուռ տիրեց անբաղդ երիտասարդին: նորա աչքերը փակվեցան և բանտապետը տարաւ նորան համարեա թէ անդպայ, դարձեալ գետի բանտ:

Շալէի ուշը վերայ գալով, փոքր առ փոքր հանդարտեց նա և սանն աչքով սկսեց սպասել մահին, որ արդէն գուշակումէր ինքը:

Ի՞այց այսու ամենայինիւ նա միշտ դարձուցանումէր իւր աչքերը գետի այն երեք վարդերը, որոնց թառամած թերթերը սկսել էին արդէն թափվել գետնի վերայ :

Գաստոնի անհաւատարմութիւնը տեսանելով, յոյս ունէր նա դեռ ևս իւր սիրականի օդնութեան վերայ, և հաւաստի էր որ Ալենտինան բարձի թողի առնելու չէ նորան:

Այս միջոցին, երբ նա այս բաների վերայ մտածելով կարծումէր իւր անձը արգելանքից աղատված, աչա եկան ասելու նորան, թէ ժողոված գատաստանը հրաւիրումէ կոմսին երևել իւր առաջեւ: Պատրաստված լինելով գետի այս սարսափելի բոպէն և հոգի ստանալով իւր աղ-

Նուական արիւնից, որ վազումքը նորա երակների մէջ, Շալէն անխռով Հոգով լսեց իւր դատավլչիով:

Բայց այս դատակնիքը սարսափելի էր, նա դատապարտումքը Շալէ կոմնը գէպ ի մահ, որ պիտոյ է կատարվէր ։ Անտէսի մէջ, Բովելի եան հրապարակում՝ անբաղդի գլուխը պիտոյ է նիղակի վերայ ցցած ամրանար Սօվետուրեան դռնումը, իսկ մարմննը, չորս կտոր արած դաշճի ձեռքով, պիտոյ է կախվէր քաղաքի չորս երեւելի փողոցներում։ Այլ նորա անունը պիտի խայտառակվէր անպատճեամբ մինչև գալոց երկար ու ձիգ ժամանակները, իսկ նորա ամրոցը փորվելու էր հիմքից և հաւասարվելու հողի հետ։

.... Բանը աւարտած էր. թառամած վարդերը թափվեցան, նորա թերթերը ընկած էին սառն գետնի վերայ, և խոր լուռթիւնը թագաւորումքը դատապարտումքը դատապարտվածի բանափի չորս կողմնումը։

Երեկոյեան տասն ժամն էր. պատիմքը պիտի կատարվէր հետեւալ օրին. Շալէն անօդնական թողած բոլոր աշխարհից, անշարժ դրած էր յարդի վերայ. մի աղջամուղջ խաւար շըջապատել էր նորան և բանտի մէջ երեւումքը մի այնպիսի խոր լուռթիւն, ինչպէս գերեզմանում։ Յանկարծ դռնի ձեղքից փայլեց մի կարմրագոյն լոյս և լուսի հետ լսվեցաւ նիղակների դղբդիւն։ Շալէն կարծեց, թէ աչա դաշիճքը մօտենումէն նորան, թէ նորա պատժի րոպէն շուտացուցել էին այն խորհրդով, որ գիշերը միայն լինէր վկայ այս գործողութեանը։

Այս մոքի մէջ ևս առաւել հաստատեց նորան կարմիր հանդերձի երեւելը, որ փայլեց նորա աչքին դուռի բացվելով, շեմքի վերայ. նա փակեց աչքերը, կցեց ձեռքերը և վերուղղեց իւր հոգին գէպ ի Աստուած. յետոյ յաղթելով այս րոպէի զարհուրանքին, վեր կացաւ յարդի վերայից.

Աչա դը բիշելին կարդինալը կանգնած էր նորա առաջն։

Բ.

Վ. Ե Ր Ձ Բ :

Շալէ կոմնը շղթաներով բեռնաւորված, տանջանքներից թուլացած, հպարտ հպարտ նստած էր կարդինալի հանդէպ և սորա վերայ ուղղելով իւր համարձակ, մի հպարտ ատելութեամբ սպառնացող հայեացը։

Բիշելին դունաժափ, աչքերը ցած թողած, կանգնել էր նորա առաջն, որպէս թէ չէր համարձակվում նայել նորա վերայ. այնու ա-

մենայինիւ նորա երեսի կերպարանքի վերայ երևումէր հաստատ վճռակա ։ նութիւն և անզգայ սառնութիւն :

« Ալէի շրժունքի վերայ փայլումէր գեռ ևս ժպիտը և նա ասաց կարդինալին, որ արած էր այս զարհուրելի այցելութիւնը :

— Պառք, ի հարկէ եկած էք նայել Շալէ կոմնի վերայ, այն պատճառով, որ ձեր ամենակործան կարողութեան չափ ու կշեռը ճանաչէիք :

« Ախալվումէք. ես չէի պատրաստում և ոչ ևս կամէի ձեր կորուստը: Երա համար, որ աշխատումէր իշխանութիւն ձեռք բերել մարդերի վերայ, այնպիսուն սպանած մարդը կարող էր միայն արգելք լինել և ոչ թէ հնար իւր դիտաւորութիւնը գործով յառաջ տանելու:

— Ի՞նչ պատճառով այժմ կամենումէք ձեր ոտքի տակ ձգել այդ արգելքը :

« Այի ասացէք, թէ ես խնդրումէի ձեր կեանքը. դորա հակառակ, ես եկած եմ առաջարկելու ձեզ այն հնարը, որ կարող էր փրկել ձեզ:

— Այդ մի փոքր յուշ է, պատասխանեց Շալէն, ժողովելով իւր հոգու բոլոր զօրութիւնը ընդգեմ փորձութեան :

« Պառք, կոմն, տեղիք ունիք հաւատալու իմ խօսքերին. պատճառ որ դոքա բղխումէին ուղղակի իմ սրտից: Եթէ ատելութեամբ վառված լինելով գուք, ինքններդ մտածել էիք սպանել ինձ Լիմուրի մէջ, ուրեմն գուք իմ թշնամին էք, և ես պարտական եմ յանձնել դատաստանին կատարել նորա կապած դատակնիքը. իսկ թէ գորա հակառակ, դուք մտածումէիք այդ բանի մէջ ուրիշների խորհրդով, որ մեծ ազդեցութիւն ունեին ձեր վերայ, այնուհետեւ տուեցէք ինձ այդ մարդերի անունները և ես աւելի պատճառ չունելով երկիւղ կրել ձեզանից պատպայումը, կը խնդրեմ թագաւորից, որ ողօրմի ձեզ:

— Պառք կամենումէք ինձ մատնիչ և զըսպարտիչ շինել, և վստահացել էք գալ այս տեղ այդպիսի առաջարկութիւնք առնելու ինձ, ուրովհետեւ լսած էիք, որպէս թէ Շալէ կոմնը թոյլ ընաւորութեան տէր է, երկշու և թեթևամիտ մարդ է: Այդ բոլորը այդպէս է, կարդինալ, բայց գեռ ամենը չեն ասել ձեզ. ձեզ չեն ասել, որ այդ Շալէի սիրտը միշտ ապնիւ էր և թէ նա, ոչինչ ժամանակ կարող չէ անհաւատարիմ դատանվել դէպ ի իւր բարեկամները:

« Ես կամէի միայն լսել ձեր օրինաւոր խոստովանութիւնը, որ կարողանայի որ և իցէ կերպով փրկել ձեզ. ես ոչինչ չունիմ ձեզ ասելու ձեր գաւակիցների մասին . . . Պառք վատ էք ճանաչում մարդերի:

— Պառցէ առաւել լսու, քան թէ գուք. պատճառ, ես մարդերին եմ պատկանում: Ես տեսել եմ խաղաղ օմեաններ, ուր գուք երեկը մտած չէք, եղած եմ զօրքի կարգերում, ուր գուք երեսումէիք որպէս

զլիսաւոր : Դուք կամիք թագաւորել ձեր խորամանկութեամբը , որ ոչ
ինչ ժամանակ կարող չէ մարդերի սիրուղ զրաւել դէպ ի իւր կողմէ :

Այդ ձեր բոլոր խելքովը չէք կարող երբէք սիրելի լինել ժողովրդ-
դին , դուք կարող եք լինել նորա իշխանը : Գրանսիսկոս Առաջինի մի
հատ խօսքը , Հենրիկոս չորրորդի մի կտոր հացը , որ նա բաշխումէր
Փարիզեցոց , հաւաքումէին նոցա մօտ ժողովրդի բազմութիւնը , որ վառ-
ված էին սիրով դէպ ի այդ մարդիկը . . . Բայց Լուգովիկոս ԺԳի և
ձեր քաղաքականութիւնը ոչինչ մարդու սիրու չեն քարշլու իւրեանց
մօտ . և ձեր անունը կը մնայ միայն որպէս յիշատակարան ինքի և աչ
ու սարսափանքի , բայց ոչ սիրու և օրչնութեան :

« Ինձ երեսումէ , որ այժմ յանցաւորը ես եմ , իսկ դատաւորը դուք ,
կոմն , ասաց Ռիշելիեն :

— Ի՞նչ զարմանք . այդ պաշտօնները այնքան անսովոր բան չեն ,
ինչպէս դուք կարծումէք :

« Ճշնարիթ » :

— Այն , թէպէտ և դուք շատ կարող մարդ էիք , այնու ամենայ-
նիւ , դուք շատ անգամ առաւել ծանրաբեռնած էիք լինում , քան թէ
մէք . . . Այդ արեղյալական վերարկուն կտրատումէ , ճնշումն ձեր սիրութ . . .
և դուք գիտեք , որ այդ պատիժը առաւել զարհուրելի է , քան թէ այն
բոլոր պատիժները , որ կարող էիք տալ ձեր թշնամիներին : Այդ
հեշտասէր պալատումը դուք միայն պիտի երեկի խստակրծն հոգեւոր ,
այնտեղ ինքը օդը վարակված է սիրով և դուք միայն չէիք համարձակ-
վում շնչել նորան . . . իւրաքանչեւր ախտաւոր հայեացք , իւրաքանչեւր
համբոյր , որ դուք տեսանումէիք զաղմնի , մի և նոյն է , ինչպէս դաշ-
նակի հարուած ձեր սրտումը , և ես զրեթէ հաւասարի եմ , որ ձեր իւրա-
տումթիւնը յառաջանումէ այն անդադար բորբոքական սրտից , որ կայ
ձեր մէջ : Դուք հալածումէք Բուքենհեմը , որպէս թագուհու սիրական ,
ինձ որպէս սիրական դը Շեվրեով դքսուհու և որպէս յանցաւոր . . .
Այն , կարդինալ , դուք տեսանումէք , որ կարող եք պատժել , բայց իսա-
բել ոչ :

« Ես տեսանումնիմ , որ Շալէ կոմնը որ այնպէս արհամարհումէր մատ-
նիչների պաշտօնը , այս բոպէիս անհաւատարիմ գտանվեցաւ դէպ ի պա-
լատի երկու երեսելի տիկինները և դեպ ի Անգլիական գեսպաննը :

— Ես անհաւատարիմ գտանվիմ թագուհուն և Վալենտինային .

« Ամբերեցէք , կոմն , որովհետեւ ձեղ այդքան քաջ յայտնի են
սիրու չարչարանքը , հառաջանքը և արտասուքը , որ ես պիտոյ է ծած-
կէի թագուհուց և դը Շեվրեով դքսուհուց , ուրեմն դուք ոչ ոքից
աւելի կարող չէիք տեղեկանալ այդ գաղտնիքին , քան թէ դոյն իսկ

տիկիններից... Այդ գաղտնիքը սյլապէս չէին կարող ասվել ձեզ, եթէ ոչ զանգատելով իմ խսութեան, իմ բռնութեան, իմ քաղաքականութեան կարգի վերայ, և դուք այդ տիկինների առանձնարաններումը ուսանելով ատել ինձ, ի հարկէ այն տեղ ևս ուխտել եք սպանել ինձ:

— Ե, յդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ անարդ զրապարտութիւն:

« Դուք շատ լաւ գիտեք, որ ես Ճշմարիս եմ խօսում: Խոստովանեցեք, որ ինձ նոյնպէս շատ բան յայտնի է, ինչպէս և ձեզ. այս խոստովանութիւնը չէ փոխելու ձեր խորհրդակիցների դրութիւնը, բայց կը փրկէ ձեր կեանքը:

— Բայց ովասաց ձեզ, որ ես կամէի ընդունել ձեզանից այդ կեանքը: Կարդինալ դը Քիշելիեօի մեծաչոգութիւնը, Ճշմարիս, այնպէս մաքուր է, որ կարելի է հաւատալ նորան... Սպանելով մի երիտասարդ, մի աղնուատօհմ, ծաղկամիթիթ հասակի մէջ մարդ, դուք չէք հերեքանալու դորանով. իւրաքանչիւր վտանգաւոր թշնամի պիտի զոհ լինի ձեզ. մի անհասանելի տորենութեամբ բարդի պիտոյ է խորակեք դուք այն մարդիկը, որ թանգ արժեկին Գրանսիային և ժողովուրդը ատելու է ձեզ վերջապէս... Դուք կը ծառայէք թագաւորին և նա կը սկսանէ միայն վախենալ ձեզանից. ձեր բոլոր կեանքումը դուք պիտի աշխատեք աղդի բարօրութեան համար, բայց այդ աղջը պիտի հատուցանէ ձեզ ատելութիւն և նղովք: « Եղն իսկ պատմութիւնը արդարացնելու չէ ձեզ, և ապագայքը պատմելու են միայն ձեր արած չարագործութիւնքը: »

« Ալէն այս խօսքերը ասելու միջոցին, նայումէր ուղղակի կարդինալի աջքերին, որպէս մարդարէ, որ մերկայնումէր նորա առաջն ապադայն, և այս հայեացքը Քիշելիեօի համար անտանելի զարհուրելի էր:

« Ալէն թուլացած, խոնարհեցրեց դլուխը կուրծքի վերայ և ծածկեց ձեռքերով երեսը. երբ նա վերստին բարձրացրեց աջքերը, կարդինալը հեռացած էր արդէն բանտից:

Բայց միթէ դը Շեվքեօղ դքսուհին այդպիսի սառնասիրտ խստութեամբ կարողացաւ կորուսանել այն երիտասարդ և աղնիւ կտրիճը, որ ամենայն բան զոհ էր բերած նորան. միթէ հրաժարվեցաւ նա Շալէի կեանքը փրկելուց այն պայմաններով, որ առաջարկումէր նորան թագաւորը. միթէ նորա մէջ այնքան զօրաւոր էր իւր անձնապաշտութիւնը, որ չէր կարող նա վճռել դործը. ոչ, ոչ, այսպիսի խստութիւն, այս պիտի վատթարութիւն սեպհական չէ մի կնող սրտի.

« ոկտեմբերի 27ի առաւօտուն, վերջին ժամերին, Շալէի պատժը վելուց յառաջ, այն կարճ միջոցումը, երբ պիտի վճռվէր այսպէս կամ այնպէս, դը Շեվքեօղ դքսուհին նստած էր միայն իւր սենեկի մէջ: « ա աղօթելով ու յիշառակելով այն մարդը, որ պյնքան միբած էր նորան,

աշխատումնը հաստատել իւր սիրտը այնպիսի զօրութեամբ, որ անսպատճառ հարկաւոր էր զոհաբերութեան համար, որ դքսուհին պատրաստվումէր կատարել բայց այն բողեն, երբ որ նա վեր կացաւ տեղից, որ գնայ յայտնէ Լուդովիկոս ժԳին, թէ լնդունումնը նորա առաջարկած պայմանները, նորա հոգին սպասումէ, նա գողումէ, նորա ծնկերը ծալվումն, նա չէ կարող յառաջ շարժել իւր քայլափոխը, և ստիպուած է բռնել սպատերից, որ վայր չընկնի: Բայց ահա վերստին արիա նումէ նա, հանումէ Շալէի սպատկերը և ծնկի վերայ ընկած նորա առաջեւ, ուխտ է գնում փրկելու նորան: սորանից յետոյ վեր է թռչում տեղիցը և պահանջումէ իւր կառքը. . . . Բայց ներս մտած սպասաւորը տալիս է նորան մի նամակ, դքսուհին նշանացի է առնում, որ թողուն նորան մենակ, մի բոպէ ևս յետացնումէ իւր գնալը:

Այս նամակը գրած էր նորան բուքենհեմը, և նորա բովանդակութիւնը էր այսպէս:

«Ա ալենտինա, պատուասիրութիւնը չէ կարող երկար ժամանակ խարել մեր սիրտը. եթէ ես մի բոպէ կուրացած էի հպարտութեամբ, տեսանելով քրանսիական թագուհիու սիրաբորբք ձգողութիւնը դէպի ի ինձ, դու պիտոյ է ներես ինձ՝ պատճառ, միւս անգամ գարձուցանումնը երեսս դէպի ի քեզ: Քեզ տիրելու համար, թողումնը ես սպատառը, ուր Աւստրիական Աննայի բարկութիւնը կարող էր հալածել և մեզ և մեր զուգաւորութիւնը: Ես հրաժարվումնը ամենայն գործից, որ պիտոյ էր ինձ կատարել քրանսիայի մէջ, այս փառքից ևս, որից իմ բաժինը պիտոյ է հասանէր ինձ: Հաւատալով, որ դու ևս նոյն չափով զոհաբեր կը լինիս իւր համար, սպասումն քեզ»:

«Բուքենհեմ»:

Դքսուհին նայեց այս նամակի վերայ վայրենի և անխելացած աշխարհով, քննեց իւր մէջ այս թանգագին մարդու ձեռքի զրութիւնը, տեսաւ փառաւոր կնիքը, Անգլիական կնիքներից ամենափառաւորը և երեելին, և պատուասիրութեան կրակը բորբոքվերով նորա երակների մէջ, հալեց ու մաշեց նորա սիրտը. . . . մի բաղդաւորութիւն, որի նմանը չը կար աշխարհի երեսին, կարող էր դառնալ նորա բաժինը: Մի բոպէ յառաջ, մի բոպէ յետ, նա կարող էր կին դառնալ բուքենհիմի. որպէս զի հեռանայ այս սարսափելի փորձութենից, նա վեր թռաւ, ձգեց վերաբկուն իւր վերայ և դուրս էր վալում սենեկից. . . . Բայց նորա աչքերը գարձնալ հանդիպեցան բուքենհիմ նամակին, և

Նա մուլացած ընկնումէ աթոռի վերայ . . . Աւզգելով իւր անշարժ հայեացքը ժամացուցի սլաքի վերայ, զննումէ նորա ընթացքը, ճօճանակի իւրաքանչիւր զարկը ժափանցումէ նորա սրտի մէջ, որպէս մի դաշնակի հարուած :

Ա ճուհաչատական սլաքը յառաջ է շարժվում. շուտով կը հասանէ նա կէս օրին, — պատժի կատարվելու սահմանեալ բոպէին, այն սոսկալի բոպէին, որի մէջ արդէն շատ զլուխներ թուած էին . . . Յանկարծ Վալենտինայի ականջը լսումէ մի թաղման զանգակահարութիւն. նորան կէս ժամ միջոց է մնում: Նա կամենումէ յարձակվել դեպի ի դուռը, բայց զօրութիւնը սպառվումէ, նա վայր է ընկնում, որպէս անզգայ, և զլուխը զարկվելով մարմարնեայ յատակին, ստանումէ մի խոր վերք:

Ա յս միջոցին ի՞նչ պատահեց Շալէին բանտումը. ի՞նչպէս անցուց նա այս խորհրդաւոր ժամերը, իւր կեանքի զարհուրելի վճռահատական բոպէից յառաջ: Այս ժամերը այնպէս սուրբ են, այնպէս ցաւալից, որ մարդիկ չեն պիտոյ միջամուխ լինին նոցա գաղտնիքի մէջ. այսպիսի ժամերում աչքերը լաց չեն լինում հասարակ արտասուքով, շրթունքը չեն արտաքերում սովորական ալօթքներ. այսպիսի ժամերում մարդու և Աստուծոյ մէջ կատարվումէ մի խորհրդաւոր և վսեմափառ խօսակցութիւն, որ միւսերը հասկանալ կարող չեն . . .

Ա յսպէս պատահեց և Շալէի հետ, այս խօսակցութիւնը ամրացրեց նորա սիրաը այրական զօրութեամբ և նա սկսեց հոգ տանել այն բանին միայն, որ ընդունէ մահը այնպիսի հաստատութեամբ, որ արժանի էր նորա երակների մէջ խաղացած արիւնին: «Նա հագաւ իւր նոր հանդերձը, յարդարեց վերջին անգամ իւր գեղեցիկ մազերը, զարդարեց կուրծքը ժապաւեններով և դուրս եկաւ բանտից այնպէս գեղեցիկ, այնպէս փառահեղ, ինչպէս էր այն ժամանակին, երբ բոլոր թագաւորական պալատը խելքը կորուսանումէր նորա գեղեցգութեան վերայ:

Ա յն բոպէներումը, երբ նա դադարեց ալօթելուց, նորա մի հատմտածութիւնը էր իւր մայրը. նա կարող չէր ինքն իւրեան հաշիւ ու համար տալ, թէ ի՞նչ պատճառով դեռ ևս յոյս ունէր մի բանի վերայ: «Նորան թվումէր, թէ մօքը կը յաջողդի համոզել (հաւանեցնել) թագաւորը. և ի՞նչպէս կարող էր որդին բոլորովին հրաժարվել այս մտածութենից, իմանալով մայրական սէրը, նորա բոլոր անշափ ու անսահման կշիռը:

Շ ալէ կոմուհին արդարեւ գործ գրեց ամենայն կարելի հնար իւր որդու փրկութեան համար. շատ արտասուք և շատ ոսկի թափեց իւր որդու վերայ կարգած դատաւորների առաջն: Յառաջացած լինելով

Մօնելիւկ երևելի աղքատոհմից, որ յայտնի էր իւր անսիովով հաւատարմութեամբ ֆրանսիայի թագաւորներին, յանձն առաւ նա վերջումը ծունր խոնարհեցնել դաստոնի առաջև և աղաշեց նորան օգնութիւն հասանել, բայց նա սառնութեամբ պատասխանեց նորան, թէ «ոչինչ կարող չէ առնել» :

«Արենազաշտ և ամբիծ Շալէ կոմնուհին լաց էր լինում դը Շեվրեով դըսուհու առաջև :

«Եա գրեց թագաւորին այնպիսի նամակներ, որոնց նմանը գուցէ թէ երբէք չէ գրված մի կին մարդու ձեռքով, և պատմութիւնը պահել է այդ նամակները, որպէս մայրական վշտի սրբազն յիշատակներ՝¹⁾»:

Շալէ կոմնը գանչեց իւր մօտ պահապաններից մինը և հարցրեց, արդեօք կարող էր նա մի լուր ստանալ իւր մօր մասին, յառաջ քան թէ դուրս էր ելած բանտից :

«Նորան պատասխանեցին, թէ Շալէ կոմնուհին աղաչանքով ու պաղատանքով կարողացել է վերջապէս մի ողորմութիւն գտանել. Թագաւորը թոյլ էր տուել մօրը, թաղել իւր որդու մարմինը պատշաճաւոր պատուով և աղատել էր չորս կտոր ձեղքելուց և անարդ կախաղանից: Շալէն գոհացաւ Աստուծուց այս շնորհի համար և արտասուեց, լսելով մօր անունը:

Տիտուր հանդէսը շարժվեցաւ դէպ ի Կանտէսեան հրապարակ: Գլխապարտվածը պահանջեց, որ թոյլ տան նորան ոտով գնալ այն տեղ, որ ժողովուրդը կարողանայ տեսանել, թէ նա հաստատ հոգով զնումէր դէպ ի մահ:

Իայց քաղաքը դատարկ էր. ժողովուրդը, փոխանակ հաւաքվելու և շտապելու դէպ ի այս արիւնչեղութեան հանդէսը, չը կամեցաւ ներկայ գտանվիլ դորան:

Փողոցներումը լրութիւն էր և տիրութիւն. Հոկտեմբերի ամպոտ օրը տխուր նայումէր երկրի վերայ. իսկ օդը հնչեցնումէր միայն արդամութեան ձայնարկութիւնքը, որ լսվումէին զանգակատնից:

Շալէն գնալով քահանայի և դահճի միջով, ստէպ նայումէր Աստուծոյ պաշտօնէի վերայ, որի հայեացքը լցված սրբազն հոգեշարժութեամբ, պահպանումէր Շալէի արիւնքիւնը. . . . Յանկարծ նորամիւս ընկերի կարմիր հանդերձի վերջը ընկաւ նորա ոտքի տակ և նա սարսափելով նայեց այս զարհուրելի մարդու վերայ: Զարմանալով նորա բարձր հասակի վերայ, նայեց նորա երեսին. . . . Այս այն մարդն

¹⁾ Recueil des pièces intéressantes pour servir à l'histoire de Louis XIII et de Louis XIV.

Էր, որին տեսել էր Շալէ կոմսը դը Շեվըեօլ զքսուհու ամրոցից գուրս գալով, որին պատահել էր Գաստոնի տնից հեռանալով, և որին գտել էր դարձեալ իւր բանտի մէջ. կարծ ասեմ, այն Լամոնը, որ երեւել էր նորա մօտ որպէս Բիշելիե կարդինալի լրտես և որպէս սպասաւոր գահիցի, որի փոխանակ պիտոյ է գործ կատարէր այն օրին¹⁾:

Այս մարդու կերպարանը այն վերջին երկրաւոր առարկան էր, որի վերայ գաղարեց Շալէի հայեացըը. սկսեալ այս բոպէից, տեսաւնա միայն երկինը:

Այս տրտում հանդէսի ժամանակ, Շալէ կոմսուհին, թուլացած հոգելոր տանջանքներից, որ առաւել ցաւեցուցիչ էին, քան թէ ամենայն տեսակ վիշտ ու տառապանք, աղօթումէր Ֆրանսիսկեան վանքի եկեղեցումը, ուր թոյլ էր տուած նորան թաղել իւր որդու մարմինը: Ամբողջ օրը ոչինչ բան չը խոռվեց այն մոայլ խաղաղութիւնը, որ թագաւորումէր եկեղեցու կամարների տակ. պատճառ, անբաղդ Շալէի մարմինը պիտոյ է մնար եշաֆօտի վերայ, մինչև օրը բոլորովին մժանար.... վերջապէս հասաւ գիշերը:

Շալէ կոմսուհին տարածված սեղանի առաջեւ, այնպէս սառն էր ինչպէս մարմարինը, որի վերայ ծունը էր գնում: «Նորա առաջեւ վերացրած քարի տեղումը երկումէր խոր փորած գերեզմանը, լապտերը գերեզմանի եզրումը դրած լուսաւորումէր այս խաւար դատարկութիւնը: Ոչ մի անուն չէր կարող գրվել Շալէի գերեզմանաքարի վերայ, և Շալէի գերեզմանը կարող էր միայն ճանաչվել այցելու մօր ներկայութենից. բայց և այս մօր արտասուրքը երկար թափելու չէին.... այդ գերեզմանի վերայ....

Վիշերը վերայ հասանելով, աւագ սեղանումը վառվեցան երկու մոմ, և մի քանի արեղայք եկան հոգեհանգիստ կատարելու: Այս երգեցողութիւնը հնչելով եկեղեցու բարձր կամարների տակ, թվումէր որպէս մի այլ աշխարհից եկած ձայն, անմարմին զօրութենների ձայն, որ գանչումէին իւրեանց մօտ հանգուցելու հոգին :

Շալէ կոմսուհին սպասումէր, նա դողումէր, եթէ լսվումէր մի ամենափր աղաղակ: Աերջապէս երկու արեղայք ներս մտան եկեղեցին և սկսեցին կամաց կամաց մօտենալ հանգստարանին....

Վոյց անշաւասար քայլափոխերից, որ լսվումէին եկեղեցու կամարների տակ, կարելի էր հասկանալ, որ կրումէին մի ծանրութիւն....

¹⁾ Շալէի բարեկամքը անցոյս լինելով ներողութիւն ստանալու, փախուցած էին «սանտէս քաղաքի դահիճը և այսպէս կածումէին ժամանակ ստանալ: Բայց այս բանը միայն առաւել ցաւեցուցիչ արեց անբաղդ մահը. պատճառ, Շալէն յանձնվեցաւ առաւել անփոք գահիցի գործակատարութեան:

Կոմունիզմին ընդունելով իւր որդու մարմինը, յարձակվեցաւ նորասառած լանջքի վերայ և գրկեց իւր մեռուցած զաւակը, տրոփ տրոփ լինելով սիրտը :

Այն ժամանակ զգաց նա երեսի վերայ արիւն, որ դեռ ևս կաթումէր այս գլխատեալ մարմինից և վայր ընկաւ իւր որդու մօտ, նոյնպէս անզգայ ինչպէս որդին Երբ դը Շեվրեոլ դքսուհին զգաստացաւ ուշաթափութենից, տեսաւ նա, որ շրջապատումէին նորան քաղաքական կառավարութեան պահպանքը. նա բանտարկվեցաւ թագաւորի հրամանով և տարվեցաւ Լուրինգիա գեալ ի իւր սեպհական դամկիերեան ամրոցը, ուր կացաւ նա որպէս կալանաւոր :

Առաքենչեմը մի քանի օրից յետոյ հեռացաւ Գրանսիայից, ոչնչացնելով խաղաղութեան պայմանքը այս անբաղդ աշխարհի հետ, ուր կորստական ախտերը պատերազմ էին բորբոքում թագաւորի և նորաժողովի մէջ, և ուր արիւնը հօսումէր գետի նման :

Իիշելիեօ կարդինալը, այս ողբալի անցքերի գլխաւոր պատճառը, ոչ թէ միայն վնասի չը հասաւ, այլ շատ բան ևս շահվեցաւ. թագաւորը երկիւղ ունենալով այն վտանգից, որի ներքոյ գտանվումէր իւր մինիստրի կեանքը, սկսեց աւելի ինսամատարութիւն ցուցանել նորան. և այս ժամանակից կարդինալը իշխանութիւն ստացաւ կարգելու իւր համար իւր յատուկ պահպանքը :



150

410

2013

